


891.99

p - 52



83-2

Handwritten scribble

Յ Ա Ո Ւ Ս Տ

ՅԵՐԻՍ ՀԱՆԴԻՍՍ

ՄԱՍԸ Ա. — ՓՈՐՁՈՒԹԻՒՆ
ՄԱՍԸ Բ. — ՎԱՅԵԼԲ
ՄԱՍԸ Գ. — ՊԱՏՈՒՀԱՍ ԵՒ ՎԱՐՁԲ

9
ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ
ԱԼԻԹԵԻԿ

? Թ. ԹԵՐՁԵԱՆ
Handwritten
Ի Ն Պ Ա Ս Տ

ԳՊՐԱՑՄԱՔԻ ՀԱՅՈՒԿԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՅ Մ. ԱՇԱԵԱՆ
ՍԻՄՊԵՐԼԻԻ ԲԱՆ ԳԵՏԱՍՏՐԿ ԹԻՒ 35
1881



Handwritten scribble

Յ Ա Ո Ւ Ս Տ

ՅԵՐԻՍ ՀԱՆԴԵՍՍ

ՄԱՍՆ Ա. — ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Բ. — ՎԱՅԵԼԻՔ

ՄԱՍՆ Գ. — ՊԱՏՈՒՀԱՍ ԵՒ ՎԱՐՁՔ



ՆՄԱՆԵՒԹԵԱՄԲ

ԱՆԻՍՏՈՒՆԻ

Թ. ԹԵՐՁԵԱՆ

Ի Ն Պ Ա Ս Տ

ՊՊՐՈՑԱՆԻՔ ԳՆՅՈՒՆԻՔ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ


ՀՐԱՄԱՆԱԻ ՄԻԱՐԻՑԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇՁԵԱՆ ԱՐԱՄԱՅ
ՄԵԻՄՊԵՒԼԻ ԻԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ ԹԻՒ 35

1881

6781



18 APR 2013

31083

Ա. ԳՆՈՒԱՅՈՒՔ

Տիկին Սրբուհի Տիւսաբ

Ատենապետ Դիւանի Ընդհանուր Ժողովոյ

Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութեան

Կը փափաքէի Ձեր ազնիւ ընկերութեան
 գործոյն ինպատճիմ ալ լուսնայտ տալ, վա-
 ւրն զի խորին կերպով համոզուած եմ թէ
 մեր ազգային յառաջագիմութիւնը կանանց
 ձեռքով միայն կրնայ տեղի ունենալ: Ներե-
 լի՞ է արդեօք ինձ այսու տրամադրութեամբ
 ուղերձել Ձեզ Գերմանիոյ մեծ քերդողին
 հրաշալի ստեղծագործութեան մէկ ազօտ
 մանրանկարը՝ որպէս զի Ձեր Ընկերութեան
 արգէն իսկ ազգին մէջ վայելած համակրու-
 թեան վրայ հռչակաւոր անուան մը հրապոյնն
 ալ յաւելլով՝ ընթերցողաց թիւը՝ և ընդ նմին
 ակնկալեալ հունձքն ալ բազմանան:

Եթէ յաջողիմ, Ա. Գնուագարմ Տիկին, այս
 իմ տենչիս մէջ՝ բարեբաղդ պիտի համարիմ
 անձս՝ Ձեր վսեմ ջանից սրով և Ձեր ար-
 դեանց գոնէ մասամբ հաղորդ գանուելու:

Թ. ԹԵՐԵՍՏՆ

ԱՆՁԻՆՔ

ՖԱՌԻՍՏ .

ՄԵՃԻՍԹՈՅԵԼ . (ՀԵԷԼ .)

ՎԱԼԷՆՏ .

ՄԱՐԹԱ .

ՄԱԻԻԱՄ

ՎԱԿՆԵՐ

ԳՈՀԱՐԻՆԵ .

ՈԼԻՄՊԻԱ .

ԲԱՐՍԿ .

ՄԱՐԴՈՒԿ .

ՋԻՆԻՈՐ ՄԸ .

Ժողովուրդ, Յաւերժանարտունք, Ուսանողք
և այլն և այլն

ՖԱՌԻՍՏ



ՄԱՍՆ Ա .

ՓՈՐՋՈՒԹԻԻՆ



ՊԱՏԿԵՐ Ա .

(Միջին դարու Տարրալուծի մը գրասենեակը, ամէն տեսակ
Այբեմայի գործերը: Ստղի մը վրայ ստուարահատոր մատ-
եանք եւ Թղթեր, ձախակողմը մեծ կաթսայ մը հըր վրայ .
Աջէն սանդղակոր դուռ մը :)



ՏԵՄԻԼ Ա .

ՖԱՌԻՍՏ

(Նստած ժողովուրդի իր իրանցիանքի դիմաց :)

Ա՛ն , իմաստասիրութիւն , իրաւագիտութիւն ,
բժշկութիւն և - ի լրումն աշխարհի - Աստուածաբանու-
թիւն ալ , ամենուն ալ խորը թափանցեցի անխոնջ
եռանդեամբ . . . և հիմայ անս հոս եմ , թշուա՛ռ խեղդ :
Ժողկեցի՛ դիզեցի անյազութեամբ . հիմայ կը քննեմ . .
և ոչինչ ունիմ . . . : Երաւ , վարժացեալ և իմաստուն
կը կոչեն զիս և տարիներէ ի վեր խումբ մը աշակերտ-
ներու քթէն բռնած ասղիս անդին կը քաշկուտեմ , բայց
կը տեսնեմ որ բան չենք կ'ընար գիտնալ : Ստոր հա-

մար սիրտս կը հիւծի : Արդարեւ աւելի բան գիտեմ
քան զամէն յիմար վարժապետ , ուսուցիչ և քահա-
նայ . ո՛չ կասկած , ո՛չ բծախնդրութիւն կը տանջին զիս
ո՛չ դժոխքէ , ո՛չ սատանայէ երկիւղ կը զգամ . բայց
այն պատճառաւ ալ սրտէս վերցուած է ամէն ուրա-
խութիւն , յոյս կամ ծիծաղ , երջանկութիւն կամ
փափաք : Եւ կը հարցնեմ իմ անձիս թէ այսչափ սնու-
տի աշխարհի մը վրայ լաւ եւս չէ՞ տղէտ ու անըն-
շան ապրիլ : Ներան մը խորը ծլիլ՝ բուրի և թոռ-
միլ մանիշակի մը նման , քան թէ կաղնոյ պէս բարձ-
րանալ՝ միակերպ մըրկաց դէմ կռուելու համար :
Կըզգամ որ բան մը չեմ կրնար ուսուցանել մարդկանց
զանոնք բարեւոքելու համար : Ասոր համար աշխար-
հիս մէջ չունիմ ո՛չ ստացուածք , ո՛չ փառք , ո՛չ վա-
յելք : Ռամիկը պատկառանօք կը խոնարհի դէմս , և
ես ի ծածուկ՝ անոր անփոյթ խնդալուն կը նախանձիմ :
Անոնք կեանքը կը վայելեն՝ խակ ես կը քննեմ . անոնք
բնութեան զուարթ երեսը կը տեսնեն ու կը զուար-
թանան , իմ աչքս խորը մտնելով գերեզմաններ կը
տեսնէ : Տաղտկացայ : Մոգութեան տուի ինքզինքս :
Ո՛հ եթէ մտայ և բանին զօրութեամբ մէկ քանի գաղտ-
նիք լուսաւորուէին աչքիս . . . եթէ ալ չստիպուէի արիւն
քրտինք մտնել չգիտցածս վարդապետելու համար :
Մտտի՛ բազմանք . . . : Ա՛հ , վերջին նայուածք մ՛ար-
ձակէիր թշուառութեանս վրայ , ճառագայթ արծա-
թեայ լուսնի , դո՛ւ՛ որ այնչափ անզամ տեսար զիս՝
կէս գիշերուընէ ետեւ , այս ստոլիս առջև հակել :
Ա՛յն ատեն զրքերու և թղթերու կոյտի մը վրայ կե-
րեւէիր ինձ , քա՛ղցր բարեկամ : Ի՛ցեւ թէ կարենայի
անուշ լուսովք թափառիլ բարձր լերանց կատարը

խոր քարայրից մէջ կամ պեղոյ ծովուն եզերքը :
Մարդուն և Աստուածութեան մէջ անհուն վերապ մը
կայ , անտարակոյս ինծի համանման թշուառ թափա-
ռող հոգիներով լցուած է այն յի՛նը . անոնք քու ըս-
պիտակ լուսովք պսակեալ կը թռչին ի կապոյտն երկնից
և տեսանելի են իմ մտածութեանս : Եղո՛ւկ , այս բան-
տիս մէջ պիտի մաշիմ ես անխճեակ և մթին
խորշ մը՝ ուր երկնից լոյսը դալկահար կիջնէ ապա-
կիներուն մէջէն . իմ հորիզոնս այս փոշոտած զրքերն
են , իմ կեանքս՝ այդ գոյնզգոյն գործիքներուն մէջ . .
և ասոր՝ աշխարհք կըսեն . . . : Քու ամբարտաւա-
նութեանդ պատիժն ընդունեցար , անցա՛գ սիրտ ,
ծերութիւնն իր ձիւներովը ծածկեց գրեզ , բայց այլ
եւս դարուն պիտի չվերագառնայ : Ո՛հ . . . կը խըղ-
ղուիմ . . . ելլիմ , երթամ . գոնէ անմեղներուն ժպիտը
գայ մեռելատիպ կերպարանքս լուսաւորելու : (Ելլե՛) :

ՏԵՍԻԼ Բ.

ՎԱԿՆԷՐ ԲԱՐԱԿ յետոյ ՀԵԼԵԼ ,

- ՎԱԿ. Բարա՛կ , Բարա՛կ :
- ԲԱՐ. Տէ՛ր Վակնէր :
- ՎԱԿ. Վայրկեան մը այդ խարոյկը թող և հոս
եկուր :
- ԲԱՐ. Ահաւատիկ եմ , Տէ՛ր Վակնէր ,
- ՎԱԿ. Ըսէ՛ նայիմ , աղայ , զո՞վ աւելի գիտուն
կը կարծես , զի՞նք թէ Տէ՛ր Ֆառասող :
- ԲԱՐ. Կարծեմ հրամանքդ ես , Տէ՛ր :
- ՎԱԿ. Եւ ինչո՞ւ կը կարծես թէ ես եմ , բա-
րեկամ :

ԲԱՐ. Վասն զի դու ինձ այդպէս ըսիր, Տէ՛ր :

ՎԱԿ. (Ձայրացեալ) Ապուշ, գնա՛ խարոյկը, արծարծէ խարոյկը :

ԲԱՐ. Կերթամ, կերթամ :

ՎԱԿ. Կեցի՛ր . ի՛նչ՞ յիմարագոյնդ յիմարաց, չե՞ս հասկնար որ Տէր Ֆառուստ իր բոլոր կեանքը կ'անցնէ պատճառներն ու արդիւնքը հասազօտելու, եղածը զննելու, մինչդեռ ես չեղածն ստեղծել կ'ուզեմ :

ԲԱՐ. Սնտարակոյս կը հասկնամ, Տէ՛ր, որովհետեւ դու կըսես :

ՎԱԿ. Լաւ՛, ինքը եղածները կը հետադօտէ :

ԲԱՐ. Այո՛ :

ՎԱԿ. Ես չեղածը կը քննեմ :

ԲԱՐ. Այո՛ :

ՎԱԿ. Ուրեմն իրմէ շատ աւելի գիտուն եմ :

ԲԱՐ. Այո՛,

ՎԱԿ. Իրմէ շատ աւելի գիտուն, վասն զի . . .

ԲԱՐ. Վասն զի դու կըսես ինձ : Տէ՛ր՝ դրան կը զարնեն :

ՎԱԿ. Լաւ՛, գնա՛ բաց :

ԲԱՐ. Ահ՛, մտէք :

ՀԵԼ. (Մոռեցիւ) Հո՞ս է Ֆառուստ հմուտ վարժապետին բնակարանը :

ԲԱՐ. Հո՞ս է :

ՀԵԼ. Հետը տեմուռել կը փափաքիմ :

ՎԱԿ. Հիմայ դուքս. ելաւ եթէ նորէն գալ կուզես :

ՀԵԼ. Ո՛չ, հոս կը սպասեմ :

ՎԱԿ. Բարեկամ՛մ, վարժապետին նստարանն է այն :

ՀԵԼ. Ես ալ իւր հիւրը եւ իր հնազոյն բարեկամն եմ :

ՎԱԿ. Իր բարեկամը՛ :

ՀԵԼ. Ես Հելել վարժապետն եմ. երեսուն տարի է ի վեր է որ Տէր Ֆառուստ ու ես առանց զիրար տեսած ըլլալու կը թղթակցինք . երկուքս ալ ծեր ենք ու չուզեցի աշխարհիս ամենէն մեծ խմաստունը չտեսած մեռնիլ : Դիտեմա՛մ, ելայ իմ հեռաւոր երկրէս հոս եկայ :

ԲԱՐ. Մեծադո՛ւն իմաստունը. ըսել է թէ դու չե՞ս :

ՎԱԿ. Ստո՞ւգիւ այդչափ մեծ է Ֆառուստայ գիտութիւնը :

ՀԵԼ. Ինչո՞ւ է այդ հարցումը :

ՎԱԿ. Վասն զի ես ալ ինքզինքս անոր չափ գիտուն կը կարծեմ :

ԲԱՐ. Աւելի ալ :

ՀԵԼ. (Ս. Վ. Գ. . . եւ ինչո՞ւ այնչափ կը քամահրես դասատուդ :

ՎԱԿ. Զինքը չեմ քամահրեր, անձիս արժէքը կը ճանչեմ :

ԲԱՐ. Ո՛չ չափազանց համեստ, ո՛չ չափազանց դուռող :

ՀԵԼ. Խօսէ նայիմ :

ՎԱԿ. Ֆառուստը ինձմէ վեր չեմ դասեր, վասն զի կ'ենթադրեմ որ քիչ մ'աշխատութեամբ վերջապէս իր կըրցածը պիտի կարենամ ընել. իսկ ինչ որ ես . . . ընելու միտք ունիմ :

ԲԱՐ. Այս է ինչիրը :

ՀԵԼ. Ի՞նչ է վաստակոցդ նպատակը :

ՎԱԿ Գիտես որ Աստուած զմարդ ի պատկերի իւրում ստեղծեց :

ՀԵԼ. Գիտեմ թէ մարդկային ամբարտաւանութիւնն այսպէս կը պահանջէ :

ՎԱԿ. Լա՛ւ , ես ալ հիմայ կենդանի էակ մը ըստեղծել կուզեմ : Ար հասկնա՞ք , իմաստուն , կուզեմ մէկը կազմել ըստ պատկերի իմում : Վերջապէս կեանք տալ կուզեմ :

ՖԱՐ. Ի՞նչ , պիտի կարդո՞ւիք :

ՎԱԿ. Պահ՛ , ատիկայ հինցած՝ միջոց մ'է և ասոր գիւտը ինձմէ շատ առաջ եղած՝ ըլլալու է :

ՖԱՐ. Իմ կարծիքս ալ ատ է :

ՎԱԿ. Հինցած , փոտած միջոց մ'է :

ՀԵԼ. Հինցած . փոտած , բայց հաւանական է որ շատ ժամանակ պիտի գործածուի դեռ :

ՎԱԿ. Իմ դիտաւորութիւնս կեանք տալ է , առանց կին մը իմ փառացս հաղորդ ընելու :

ՖԱՐ. Ա՛հ , մէյմը բաղադրութիւնը գտնէինք . առտու երեկոյ ուրիշ գործ պիտի չուեննամ . . . ան թոռներու քանի որ կը մտածեմ :

ՎԱԿ. Զանազան խառնուրդներ , գոյութիւններ և ողիներ իրարու բաղադրելով :

ՖԱՐ. Ի՛նչ գիւտ , ի՛նչ գիւտ . . . բայց ո՞ր սեռէն պիտի ըլլայ այդ . . .

ՎԱԿ. կուզեմ շնորհալի , սիրուն , մտացի բան մ'ատեղծել :

ՖԱՐ. Կին մը :

ՎԱԿ. Հլութեան օրինակ մը :

ՖԱՐ. Մարդ մնէ :

ՎԱԿ. Հաւատարմութեան :

ՖԱՐ. Հասկցայ , յուն մ'ըլլալու է :

ՎԱԿ. Շատ տարադներ գործադրելի և յաջողութեան մաղ մնաց , բայց գերազոյն վայրկենի բան մը կայ որ կը պակսի :

ՀԵԼ. Իե՛քը կը պակսի :

ՖԱՐ. Միայն պակտոյն ան է :

ՎԱԿ. Ի՞նչպէս խելքը :

ՀԵԼ. (Որո՛ք էլլելով) Շունչը , հողին , կեանքը վերջապէս :

ՎԱԿ. Կեանքն , այո՛ , այդ միայն կը պակսի իմ կենդանի էակէս :

ՀԵԼ. Բան մը չէ . բաղադրութեանդ մէջ այս սրուակին օշարակէն քիչ մը թափելով կարծեմ թէ կրնաք ստոյգ ըլլալ յաջողելու :

ՎԱԿ. Ի՛նչ , այդ սրուակին մէջ . . . :

ՀԵԼ. Զուռեցածդ կայ :

ՎԱԿ. Միտք կա՞յ :

ՀԵԼ. Այո՛ :

ՎԱԿ. Հողին կա՞յ , շունչը . . . :

ՀԵԼ. Լո՛ւէ՛ , պահէ՛ այդ սրուակը . . . անա դաստուգ :

ՎԱԿ. Իմ դասատու՛ւս , ես հիմայ իրենն ըլլամ պիտի :

ՖԱ. (Մորանէ քուռով ծաղիկն է յետէն) Կրցայ մըրիկը ասնձահարկ , կայծակն արգելուլ ամպոց մէջ . այդ նորաթառամ ծաղկանց իրենց առջի թարմութիւնը չկրցայ տալ . . . Օտարական մը :

ՀԵԼ. Բարեկամ մը . հետդ թղթակցող Հելիլ :

ՖԱ. Հելիլ . թողէք գմեղ առանձին :

ՎԱԿ. Համբերենք . ամէն իմաստութիւն՝ ամէն գիւտ՝ ամէն բարիք՝ ամէն մարիթարութիւն ատ բառին մէջ են . քիչ ատենէն իմ դերիս պիտի ունենամ որուն պիտի հրամայեմ ես ալ :

ՖԱ. Աղէ՛ , հնազանդէ :

ԲԱՐ. Այո՛, Տէր :

ՎԱԿ. Հնազանդէ՛, աղէ՛ :

ԲԱՐ. Ես նայինք ինչ պիտի կարենամ ստեղծել :

ՏԵՍԻԼ Գ.

ՖԱՌՈՒՍ, ՀԵԼԵԼ

ՖԱ. Հմուտն և հռչակաւորն Հելել իմ տո՛ւնս :

ՀԵԼ. Հմո՛ւտ, հռչակաւոր՛: Բարեկամ՝ իրարու այդ անուսները ռամկին առ ջլե տանք, բայց առանձին գտնուած ժամանակնիս՝ խոստովանինք թէ մեր մէջ մեծագոյնք ալ դեռ շատ ստորին են, և թէ գերագոյնք ալ շատ բան չեն գիտեր :

ՖԱ. Այո՛, այո՛ մարդկային ուսմանց ամենէն ճշմարիտ պտուղն այս է՝ գիտնալ որ բան չը գտնուի :

ՀԵԼ. Հոս մէկը չկայ որ գտնուի լսէ՛, ամբողջ կեանքդ աշխատութեան զոհեցիր, դո՞հ ես ըրածէդ :

ՖԱ. Իսկ դո՛ւ :

ՀԵԼ. Եղո՞ւկ, որչափ գեղեցիկ տարիներ կորսուեցան, բարեկամ : Մարդ կուզէ արարչութեան գաղտնեաց մէջ թափանցել :

ՖԱ. Բնութեան անյայտ խորհրդոց առջև միտք կը թալկանան :

ՀԵԼ. Եւ կունակը կը կորանայ, և մատենից վերայ խոնարհած գլուխը կը ձերմկնայ :

ՖԱ. Եւ օր մը երբ մարդ աչքը վեր կը վերցնէ՝ ամէն բան փոխուեր է չորագին. ժամանակը տարեր է սիրոյդ առարկաները, զամէնը՝ որ կը ժպտէին քեզ,

որ դքեզ կը սիրէին և երբ դիպուածով բարեկամ մը դեռ կ'ապրի և դողդոջուն ձեռքերն առ քեզ կը կարկառէ . . . քանի՛ կսկիծ կայ այդ անձայն պարաւանդին մէջ :

ՀԵԼ. Եւ երբ քովէդ անցնին զոյգ զոյգ սիրահանք թեւ ի թեւ ու ժպտելով, ի՛նչպէս հողին կը հառաչէ, ի՞նչ ըրի ես իմ ծաղիկ օրերս :

ՖԱ. Եւ երբ երկնածայր հովանաւոր մայրեաց ետին, կամ վայրենի ծառոց պուրակներու տակ սիրոյ մրմունջները կը լսես՝ և իրարու տրուած անոյշ անուանքը՝ և երկա՛յն անյագ համբոյճները՝ ի՞նչպէս կըսէ մարդ, ի՞նչ ըրի ես սիրոս :

ՀԵԼ. Այո՛, գիտութեան պտուղը դառն է և այդ պտուղը պատրանք կը կոչուի :

ՖԱ. Իմ է յանցանքը. հարիւր անգամ ազդեց ինձ երկինք, բայց սկոռնջ գոցեցի :

ՀԵԼ. Ա՛հ, ա՛հ, երկինք կը խօսի քեզ (Ելէ՛ւ՛՛) ողջո՞յն ընտրելոյն Տեառն :

ՖԱ. Աստուած ամէն մարդու կը խօսի և իւրաքանչիւրին համար լեզու մ'ունի. Տէր զօրութեանց է. և նահատակին կը խօսի շեփոբոց դռնչամբ : քերդողը՝ սրտին մէջ երկնաբարբառ ձայն մը կըսէ. այլոց հետ ալ կը խօսի Աստուած ջուրը կարկաջանօք, ծաղկանց բուրմամբ և թռչնոց դայլայլով : Ինձի՛ այս ստուերամած գործարանիս մէջ բանտախիւալ ծաղիկ հասակէս ի վեր և ուսմանց մէջ ընկղմեալ՝ Սուրբ Տաճարին զանգակներն կը խօսէին : Մի՛ ժպտիր, իմաստուն. ինձ կը թուէր թէ այդ պղնձին զանախուներուն մէջ երկնային ձայներ կը լսուէին. երբ քրտանամեայ էի, զանգակները ինձ կըսէին : Երկնային,

1001
6691



ողջոյն մանկութեան, ահա ժամն ուր ամէն բան
 կը ծիւ, ամէն բան կ'աղօթէ, ամէն բան կը սիրէ,
 այս ժամն է՝ ուր սրտերը զիրար կ'ընտրեն: Եկո՛ւր
 դուն ալ սիրէ:» Յետոյ երիտասարդ հասակն եկաւ.
 աւելի լաւը կը թնդային զանգակները: «Ողջոյն,
 կըսէին, ողջոյն քեզ. ահա եղանակն որ ծառը պը-
 տուղ կը բերէ, ուր մարդ ամուսին է և հայր: Կ'անց-
 նի ժամանակը: Բարեկամ, մի՛ սպառիր մտտի զի-
 տութեանց մէջ. եկո՛ւր կենացդ վերջապետոյն հըր-
 ճուանքը պատրաստէ՛. ընտրէ՛ վերջապէս այն բա-
 ղուկները որ օր մը դողդոջուն ծնոցսդ նեցուկ ըլ-
 լան պիտի: Պատրաստէ այն սրտերը՝ որ օր մը սի-
 րով լցուած՝ գերեզմանիդ վրայ արտասուօք աղօթե-
 լու պիտի դան:» Ես՝ կա՛ջխատէի դարձեալ. . . վեր-
 ջապէս ծերութիւնն հասաւ: Ենչո՞ւ այլ ևս զանոնք
 չեմ լսեր: Ո՛հ, քանզի չափազանց երկար սիրտս ու
 ականջս գոցեցի անոնց սիրահրաւէր խորհրդոց: Հի-
 մայ ութսունամեայ եմ. . . և այն ատեն միայն նո-
 բէն պիտի խօսին ինձ երբ զանոնք ս'լ պիտի չկըր-
 նամ լսել:

ՀԵՆ. Այո՛, այո՛, հաճոյք, մեծութիւն, փառք
 գանձեր էին՝ զոր չճանչցանք ու արհամարհեցինք:

ՅԱ. Բռնած ճամբանիս սխալ էր ու նարտակին
 չհասանք:

ՀԵՆ. (Բռռռ) Նորէն սկսելու է:

ՅԱ. Նորէն:

ՀԵՆ. Վերստին մանկանայու է:

ՅԱ. Մանկութեան ծաղիկը վերկենցաղել:

ՀԵՆ. Ինչո՞ւ չէ. — Բան չկայ որ մեռնի բնու-
 թեան մէջ, ամէն բան կերպարանափոխ կըլլայ մահ-

ուամբ՝ երբ ժամանակը լրացած ըլլայ: Վերջապետոյն
 մէջ միջոցողը՝ նորալոյս կը ծագի այդուն, և տե-
 բեւութամբ ծառը՝ նոր բողբոջներով կը գարդարի: Կը
 տեսնեն այդ փունջը ամսէ մի՛ վեր թուամաճ, լա՛ւ,
 հիմայ պիտի վերկենցաղի: Ա՛հ կը ժպտիս. . . և եթէ
 ըսէի քեզ որ ժամանակ պիտի գայ ուր մտածութիւ-
 նը փայլակաց թևով Ովկիանոսին մէկ ծայրէն միւսը
 պիտի թռչին, կը խնդայիք. եթէ խօսէի հետդ այն-
 պիտի դորութեան մը վրայ, որ կարող է մէկ ձևով
 թմրեցնել, մէկ նայուածքով սթափեցնել: Եթէ ըսէի
 վերջապէս թէ զիս կենդանացնող շունը կրնայ շօ-
 շափումմբ կամ կամօք ուրիշի մը անցնիլ՝ կը ծիծա-
 դէիր. . . և սակայն նայէ՛: (Ծաղկանց քոնէը երե՛ն
 կը ցոցնէ որ վերստէն ծաղի՞ծ է):

ՅԱ. Իրաւ է՛, իրաւ, մեծ սքանչելիք մ'է, բայց
 կարող չէ զիս ապեցնելու:

ՀԵՆ. Արդարե՛ւ, Ֆառատ իմաստունը աւելի հը-
 մուտ վարժապետներ կը ճանչէ:

ՅԱ. Այո՛, կը ճանչէ մէկը. (Էրեբը Խառնելով.)
 ահա անոր ըրած հրաշքները՝ քուկինէդ հազարազա-
 տիկ զարմանալի:

ՀԵՆ. Եւ այդ. . . հաւաքածոյն. . .

ՅԱ. (Աւերարան մը ցցելով էրէն) Ահա՛ այ՛ն և
 բա՛ց, հոն կընթեռնուս թէ ի՛նչպէս կոյրք կը տես-
 նեն, կաղք կը բաղեն, համերք կը խօսին, և մահուան
 բանտէն դուրս կը վազեն մեռեալք, Ա՛ն:

ՀԵՆ. Նայիմ (Ձեռք Բռնու ժամանակ մէկ մը կար-
 յայէ և դեպ է խորը կերթայ) Բայց ի՞նչ է այդ գիրքը:

ՅԱ. Այդ գիրքն Աւետարանն է, իսկ դու՛ դո՛ւ
 սատանան ես (Աւերարանը էր վրայ կը րարածէ. Ինչո՞նք)

Հէ՛ւ՛ւ ԳԻՒՆԵՒՆՎ ՄԷՔԻՆԻՔԵՒԹ ԿՐԻՍՏՈՍ (ԿՐԻՍՏՈՍ) Ե՛րթ յետս, Ե՛րթ յետս՝ դատապարտեալք դժոխոց . . :

ՄԵՖԻՍՓՈՖԵԼԷՍ. Դերդ աղէկ կատարեցիր, պատուելի, հասկցա՛ր ո՞վ ըլլալս :

ՖԱ. Եւ պատուիրեցի որ դուրս ելլես :

ՄԵՖ. Եթէ այդչափ շուտ արտաքսես՝ պիտի կարծեմ որ կը վախնաս :

ՖԱ. Քեզմէ՛ վախնա՞մ . . . կեցիր . . . :

ՄԵՖ. Շնորհակալութիւնս :

ՖԱ. Անու՞նդ :

ՄԵՖ. Մէֆիսթոֆէլէս :

ՖԱ. Մէֆիսթոֆէլէս . . . դժոխային գունդերուն մէջ նշանաւորներէն ես :

ՄԵՖ. Կրնա՞նք խօսիլ (կէ նոյն) :

ՖԱ. Լա՛ւ, խօսէ՛ տեսնենք :

ՄԵՖ. Ես եկայ քեզի շնորհելու քու գիշերներուդ երազածը, գաղտնի հառաչանքներուդ և անվերջ կսկծանացդ պատճառը : Երիտասարդութիւնս պիտի տամ քեզի՝ առանց բան խնդրելու . փառք, սէր, մեծութիւնս, առանց բան մը խնդրելու :

ՖԱ. Ադ սակարկութեամբ պիտի խաբուիս . յիշա՛ր ալ շատ երիտասարդ ես :

ՄԵՖ. Պիտի խաբուի՞մ : Այդպէս կըլլար՝ եթէ ինչպէս ձեր գոռոզութիւնն զձեզ համոզեր է՝ բանաւոր էակ մ՛ըլլար մարդ : Կը խաբուէի՝ եթէ անցագ սրտով սիրոյ մէջէն չքաղէիր նախանձն, առեղութիւնը և փոքրիկ ոճրագործութիւն մ՛ալ, որով հոգիդ ձեռքս կ՛անցնի : (ոյ՛ կ՛եւէ) Այդպէս կըլլար՝ եթէ երիտասարդութեան մէջ միայն հաւատք ու եռանդ . փառաց մէջ՝ միայն վեհանձնութիւն,

և ճոխութեան մէջ միայն գթասիրութիւն գտնէիր : Եթէ քեզի շնորհած բարեաց մէջէն միայն մաքրութեան ծաղիկը քաղես՝ ինչ որ անոնց մէջ միայն առնարատ, վսեմ ու Աստուածային կայ, յիշա՛ր խաբուած կըլլայի : Բայց թէ որ, ինչպէս կը խորհիմ, մարդս ողորմելի արարած մ՛է՛ որ աչք ունի չտեսնելու համար, ականջ՝ չլսելու համար . եթէ քու երակացդ մէջ վազելիք պատանեկան հուրը պիտի կըրէ մոռեկան կրից փոփուրն ալ, դու ինքնին պիտի դատապարտուիս, և հարկ չեմ տեսներ որ կանխաւ հոգիդ ինծի խոստանաս՝ ի տես վճարելի տուտակով մը :

ՖԱ. Կըմբռնեմ, և բոլոր այդ խոստացած բարիքը . . . :

ՄԵՖ. Ըսէ՛ :

ՖԱ. Կը մերժեմ :

ՄԵՖ. Կը մերժե՞ս . . . Ի՞նչ, թէ և փորձառութիւնս մ՛ ունիս որ կարող է զսպել զքեզ դժոխոց լարած որոգայթներէն, թէ և կենդանի յիշատակ մը կ՛ձգեմ ի քեզ, և տաժանելի աշխատութեամբ ստացած իմաստութիւնդ կանխաւ կիմացնէ քեզ վտանգը :

ՖԱ. Կը մերժեմ :

ՄԵՖ. Կը մերժե՞ս երիտասարդ ըլլալ :

ՖԱ. Այո՛ :

ՄԵՖ. Կը մերժե՞ս գեղեցիկ ըլլալ :

ՖԱ. (վարանելով) Այո՛ :

ՄԵՖ. Կը մերժե՞ս սիրելի ըլլալ :

ՖԱ. Սիրելի՞ . . . — կեցիր :

ՄԵՖ. Սիրելի՛ անանց ամենուն, որոնց ըսես «կը սիրեմ զքեզ» :

ՖԱ. Լուէ՛ :

ՄԵՖ. Փարթամութեամբ լցուած :

ՏԱ. Բաւական է :

ՄԵՑ. Ամենայն փառօք արբեցեալ . . . ամէն կանանցմէ պաշտուած :

ՏԱ. Թո՛ղ զիս . . . ո՛հ ոչ . . . խօսէ՛ . . . խօսէ տակաւին :

ՄԵՑ. (Մէկուսի) Ո՛հ (Քարոյր) Ընդունէ՛, Ֆառուտ, ընդունէ՛. խօսք մ'ըսէ, և ոտքիդ առջև խոնարհած պիտի տեսնես ամենէն խրոխտ ոգիները, ամենէն գոգոտր սրտերը (շնեհակներու յայնչ և Լուսի) : Ընդունէ՛ և ամենէն նաղելի աղջկունք մրցմամբ գան ըուսէրդ հայցելու :

ՏԱ. (Մարտիկ հեռանալով) Լուէ՛, անիծեալ լուէ՛ : Զանգակներուն ձայնն է . . . ինչպէս երբեմն՝ հիմայ ալ կը խօսին ինձ անոնք, լսէ՛ ի՛նչ կըսեն, «Ողջո՛յն ողջո՛յն ծերութեան ալ, այն մարդուն՝ որ կենաց երկայն ասպարէզին մէջ յաղթեց չար կրօնք + գերեզմանին վրայ գլուխ ծռած ծերունւոյն՝ որ արհամարհանօք կը մերժէ երկրաւոր գանձերը՝ որ հաւատոյ մէջ կը ննջէ և կը զարթնու լուսարձակ՝ յախտենակա նութեան մէջ» . Եւ դու՛ երթ յետս, անիծեալ :

ՄԵՑ. (Հեռանալով չբայ) Կը հնազանդիմ, բայց յիշէ՛ որ սէր, մեծութիւն և զօրութիւն կը նուիրեմ քեզ ուր ալ ըլլաս պիտի ըլլամ ես ալ. կանչէ զիս ու կ'երեւամ :

ՏԱ. Սո՛ւրբ գանգակներ, լսեց զձեզ սիրտս, և կ'երթամ աղօթից տունը ծնրադրելու (Յարար կ'ելլէ) :

ՄԵՑ. Զախագանց ուչ է . . . պիտի կոչես զիս (Գեղարարչ Կ'ելլայ) :



ՏԵՍԻԼ Դ.

ՎԱԿՆԷՐ ԲԱՐԱԿ

ԲԱՐ. Ի՛նչ կայ . գային Տէ՛ր :

ՎԱԿ. Ո՛հ, վերջապէս կրնամ մեծ ձեռնարկութիւնս անգամ մ'ալ փորձել : Շուտ, խարո՛յկը, կաթսա՛ն :

ԲԱՐ. (Դեղ է հնոց երթալով) Ահա՛, Տէ՛ր, ահա՛

ՎԱԿ. Հասաւ գերագոյն վայրկեանը . . . փչէ՛ :

ԲԱԿ. Փչեմ :

ՎԱԿ. Յորչափ կը խորհիմ որ իմ ձեռքովս յօրինուած էակ մ' ունենամ պիտի . . . ի՛նչ շքեղ ձեռնարկ . . . սիրտս կը բարբախտ :

ԲԱՐ. Ի՛նչ պարծանք ինձի . . . այսչափ վսեմ օշարակի մը կրակը ես կարծարծեմ :

ՎԱԿ. Գերի՛ մ' ունենալ միշտ ոտքիս առջև . . . որուն միակ դբաղմունքն ու հոգն ըլլայ պիտի խոնարհաբար կամքս գուշակել ու կատարել :

ԲԱՐ. Սկսաւ եփ ելլել, սկսաւ, ա՛հ ինչե՛ր կզգամ :

ՎԱԿ. Մէջը դրի՛ր ամէն նիւթերը՝ որոնց ցուցակը տուի քեզ :

ԲԱՐ. Այո՛, ամէնն ալ, բայց չէի գիտեր որ արարած մը բաղադրելու կարեւոր նիւթերն ըլլան անոնք :

ՎԱԿ. Ըսել է ամէնն ալ մէջն են :

ԲԱՐ. (Թողն մը և ցոցոցէ) Յուցակը հոս է :

ՎԱԿ. Տուր նայինք, քաղ մ' ընենք : (Զայլմամբ կարեւոր) «Տատրակի մը սիրտը» :

ԲԱՐ. Մա՛նր՝ մա՛նրիկ տատրակիկ մը : Շատ չէ սիրտը, Տէ՛ր :

ՎԱԿ. Անկարելին փնտռելու չէ, բարեկամ (նոյն-
պէս) «Գառնուկի մը հեղութիւնը» :

ԲԱՐ. Ամբողջ գառնուկ մը մէջը նետեցի :

ՎԱԿ. Լա՛ւ ըրիր : ուղածս այն է որ շատ հեղ
ըլլայ : «Գեղեցկութիւն» :

ԲԱՐ. Յուսամ թէ դո՛ւ կըլլաս :

ՎԱԿ. «Շնորհք, նրբութիւն, նեղութիւն, թե-
թեւութիւն . . . » :

ԲԱՐ. Ո՛հ, աղանեսակ մը :

ՎԱԿ. Ասոնցմէ քիչ քիչ դնելու է :

ԲԱՐ. Պէտք եղածին չափ :

ՎԱԿ. Վերջապէս, «Հողին, շունչը . . . » : Ա՛հ
աս էր պակասը :

ԲԱՐ. Հելել գիտնականին սրուակը :

ՎԱԿ. Ահա՛ : (Բարակ յարգանքով անոր կը նայի ու ար-
նել կոչէ) : կրտէ թէ ասով էակ մը կը կենդանանայ :

ԲԱՐ. Շուտ, նայինք սա իմ ստեղծելիք արարածս
աւարտէ . . . փչէ՛, (Սրահին մէջէն կը քափէ՛ ահար-
ճայմամբ կախան պայթելով անն ու յախէն կ'զգեցնին Բա-
րակ և Վահներ : Մարդու-կը երեսն կէլի :)



ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆԻ և ՄԱՐԴՈՒԿ

(Զարմայժամբ շորք առարկաները կը փնէ) :

ՎԱԿ. (Գլուխը վերցնելով) Բարակ, Բարակ :

ԲԱՐ. (Նոյնպէս) Տէ՛ր :

ՎԱԿ. Եղա՛ւ :

ԲԱՐ. Եղաւ . . . լեղիս փրթաւ :

ՎԱԿ. (Մարդու-կին նայելով) Ա՛հ, այո՛, այո՛, քործը
կատարուեցաւ . . . Ահա գերիս նայէ :

ԲԱՐ. Իրաւ :

ՎԱԿ. Բայց չգիտեմ, արո՞ւ եղաւ թէ էդ :

ԲԱՐ. Պահ . . . չգիտեմ (Մարդու-կին կը մերկնայ
որ դէմքը բռնցի կը շոթէ) : Ադ ի՛նչ բուռն է . . . էրիկ
մարդ է, Տէ՛ր . . . :

ՎԱԿ. Ա՛յր . . . (մտնելու նայելով) Ա՛հ, էակ մը ըս-
տեղծեցի . . . հրաշագեղ . . . չխօսիր :

ԲԱՐ. Չխօսի՛ր : Պարո՛ն, համը չըլլա՛ք :

ՄԱՐԴ. Ո՛չ, (երկու-տեղ մեջտեղ) Ի՞նչ կուզես :

ՎԱԿ. Կը խօսի :

ԲԱՐ. Ա՛հ, ըսածիդ չափ կատարեալ չէ :

ՄԱՐԴ. Ո՞վ զիս հոս բերաւ մեր աշխարհէն :

ՎԱԿ. Ո՞վ, ե՛ս . . . ես . . . գերիս :

ԲԱՐ. Մենք, մենք ենք բերողը, ի՛ր գերին :

ՄԱՐԴ. Ո՞վ զիս հոս առաջնորդեց . . . Ի՞նչ են այս
չորս կողմի առարկաները (Վահներու ու Բարակի
չէլի) Ա՛յս ինչ է :

ՎԱԿ. Մարդիկ են, գերիս :

ՄԱՐԴ. Ի՛նչ տգեղ բաներ են սա մարդ ըսածնիդ :
(Պարտահանելու կողմ կը շարժուի) :

ԲԱՐ. Տգեղ, տգեղ ըսիր :

ՎԱԿ. Դեռ բան չգիտեմ . . . կստա՞ք կը բանամ :

ՄԱՐԴ. Ես հո՛ն երթալ կուզեմ :

ՎԱԿ. Ես զքեզ կը տանիմ, գերիս :

ՄԱՐԴ. Տա՛ր զիս :

ՎԱԿ. Վերջը կը տանիմ, կը բաղձամ ձեռակիր-
տիս վրայ նայիլ ու զարմանալ . . . կը բաղձամ . . . :

ՄԱՐԴ. (Ուրիշ) Շո՛ւտ պիտի տանիս զիս . . . չմտա :

ՎԱԿ. Բայց :
 ՄԱՐԴ. (Բռնէ) Իմ կամքս ատ է :
 ՎԱԿ. Կը հնազանդիմ, գերիւս, կը հնազանդիմ :
 (Բարակէն որ կը ժպտէ) Այդ բաժնի ծաղիկ ի՞նչ կը նշանակէ
 Ֆառնակէն մեծ գիտնական եմ . . . ես եմ այդ արա-
 բաժնի ստեղծողը :
 ՄԱՐԴ. (Յասմամբ) Աղէ՛, կը սպասեմ :
 ՎԱԿ. Պատրաստ եմ՝ գերիւս, պատրաստ եմ .
 (Դուրս կ'ելլէ՝ Մարդուկէն շաշկուտով :)
 ԲԱՐ. (Երեւոյն երկուսով) Մե՛ծ գիտնական, պար-
 սափելի գիտնական . . . հապա ես՝ որ կըսկը փչեցի
 (Աջէն կ'ելլէ :)

ՊԱՏԿԵՐ Բ.

Մեծ հրապարակ . ձախէն եկեղեցի մը կ'երեւայ : Գինեռուն
 մը . մէջի տակառները կը տեսնուին :

ՏԵՍԻԼ Ա.

ՈՍՏԱՆԻՔ և ՈՍՏԱՆՈՒՆԻՔ, ՈՒՍԱՆՈՂՔ, ԱՂՋՎՈՒՆՔ
 ԶՕՐԱԿԱՆՔ, ՄՈՒՐԱՅՎԱՆՔ, ՇՐՋԱԳԱՅՈՂՔ
 ԻՍՈՒՆ Ի ԻՈՒՌՆ

ԳՈՐԾ. ՈՄՆ. — Ո՞րք բարով, բարեկամներ :
 ԳՈՐԾ. ԱՅԼ. — Որտե՛ր, զո՞ւն :
 ԳՈՐԾ. Ա. — Ձաղացքին կողմը կերթանք : (Արդե՛ն
 անբէն ցրտած են, ո՞մանք կ'ելլեն) :
 Ա.ԶԿ. Ա. — Տուն դառնամ :

ԱՂՋ. Բ. — Հետո եկու՛ր, հիմայ պարսպէն դուրս
 բլլալու է նա կնիքներուն տակ :
 ԱՂՋ. Ա. — Քու սիրականդ, ի՛նչ արուոր դըօ-
 սանք ինձի : . . . քեզի հետ պիտի փախնայ ու միայն
 հետդ պիտի պարէ :
 ՈՒՍ. Ա. — Սա աղաքիկ աղջկանց ետեւէն երթանք :
 ՈՒՍ. Բ. — (Ո՞մանք գինեռուն մէջ կը խօսեն) Սա միւս
 երկուս սիրունիկները աւելի աչքս խածին :
 (Նոյն ժողովն գինեռուն մէջ կը խօսեն) Մե՛ծ գինեռուն
 եւ Բարակէն մէջ կը խօսուին, որ կը խօսեն :
 ՄԵՑ. (Մեկնալ) Աստուք ի՛նչպէս վաճառու է :
 (Բարձր) Բարեկամք, ինձի ալ դառնա՛յ մը չկա՛յ :
 ՈՒՍ. Հոս ամէն մարդ իր բարեկամին միայն կը
 հրամցնէ :

ՄԵՑ. Ա՛հ, ըսել է թէ ես իմ գլխուս ճարը տես-
 նելու եմ, լա՛ւ : (Տակաւ մը կը ծակէ, գինեռուն տեղէն
 կ'ելլան, Բարակէն մէջ կը փախչի աղաղակով, սաստանան
 է սաստանան) (կը խօսակիւն և կ'երթան) Սա վաճառու-
 ները փախուցինք : Ուր և է հիմայ կուգայ հոս Ֆա-
 ուստ : Բայց ժամանակ չը կորսնցունենք . երթանք
 պնդածնակալի մը խորհուրդ տալու : կամ վանահօր-
 մէ մը խորհուրդ առնելու : Բայց անա հասանա՛ւ
 նոնք ալ :

ՏԵՍԻԼ Բ.

ՎԱԿՆԵՐ, ԲԱՐԱԿ, յետոյ ՄԱՐԴՈՒԿ, ՄԵՑՆԻՍՈՅԵԼԷՍ
 ՎԱԿ. Գերիւս ի՛նչ կըսէ :
 ԲԱՐ. Ա՛հ, հոս է կղեր գերիւդ, Տէ՛ր :

ՄԵՑ. Իր գերին . . . քու վրայովք կը խօսի :

ՄԱՐԴ. Այո՛, զիս իր գերին կը կարծէ :

ՎԱԿ. Ի՞նչ գործ ունիս հաս, գերիս :

ԲԱՐ. Քովք ալ կրիտասարդ մը կայ :

ՄԱՐԴ. (Վ. Կեբէ) Ի՞նչ վրովք է, միշտ հնազանդե՞լու համար ստեղծեցիր զիս :

ՎԱԿ. Այ ի՞նչ խօսք է. անտարակո՛յս :

ՄԵՑ. Երկնաւոր Արարչէն ալ աւելի պահանջ մունքներ ունի՞ս, Վ. ավի՛նէ՛ր :

ՎԱԿ. Ատ մարդը զիս կը ճանչնայ՝ փղեր . . . և ինչո՞վ աւելի պահանջ մունքներ ունիմ :

ՄԵՑ. Աստուած մարդու ազատ կամք տուաւ ; «Ազատ ե՛ս» ըսաւ :

ԲԱՐ. Ներկեցէք խօսքի մէջ նետուելուս, ատ խօսքը մարդուն ըսաւ և ոչ թէ գերիներուն :

ՄԱՐԴ. Ա՛հ :

ՎԱԿ. Իմ կարծիքս ալ ատոր մօտ է :

ՄԱՐԴ. Ետքը՛ :

ՎԱԿ. Ետքը՛ : Դու իմ ձեռացս գործն ես, սի. րեկի՛ս, և կը հրամայեմ որ՝ մանաւանդ Աւսանողաց հետ տեսութիւն չընես . . . անոնք մարդը ակնթարթի մը մէջ գլխէ կը հանեն :

ԲԱՐ. Խօսիլ ատոր կրսնն :

ՄԱՐԴ. (Յամմաթ) կը հրամայե՛ս :

ԲԱՐ. (Յձ աւ Վ. Կ) Քեզ տեսնեմ, ոտք կոխէ՛ :

ՎԱԿ. (Վ. Կամմաթ Գձ աւ Բար.) Հիմայ կը տեսնես (Բարթ) Այո՛ . . . ես . . . ես . . . քեզի :

ՄԱՐԴ. (Յամմաթ) Դե՛ս :

ՎԱԿ. (Վ. Կամմաթ) Այո՛խնքն թէ . . . երբոր այո՛ կրսեմ . . . լսել կուզէի . . . ըսածս ի՞նչ էր . . . :

ԲԱՐ. (Մեկուսի) Ոտքերը ջուրը իջան, կորաւ :

ՄԱՐԴ. կըսէիր . . . թէ կը հրամայես :

ՎԱԿ. Ո՛չ, ո՛չ, կը պաղատիմ, Մարդուկ, կ'ազա՛նէմ :

ՄԱՐԴ. Ատ ալ շատ է :

ԲԱՐ. Հո՛, հո՛ :

ՎԱԿ. Լա՛ւ, կ'աղերսեմ, կը թախանձիմ . . . հա՛ (Մեքեմեքեք շշուռ մը կընէ Մարդուկն) :

ՄԱՐԴ. Գնա՛, հող նստէ՛ :

ԲԱՐ. (Հրամայելով) Հող գնա՛ :

ՎԱԿ. (Շար մեղմ) Այո՛, իմ գերիս, այո՛, (կերթայ կը շար) Ի՞նչ նորանշան գերի մը որսայինք :

ԲԱՐ. կարծեմ շատ գլխիցաւ պիտի ունենաս աս գերւոյդ . . . ծառայելու համար :

ՄԵՑ. Ի՛հ, բարեկամ :

ՎԱԿ. (Յամմաթ) Քուկին ուզածդ ի՞նչ է :

ՄԵՑ. Այդ զինետունը մտի՛ր ու զինի ուզէ :

ԲԱՐ. Աս ալ լաւ, ատոր ալ ծառան պիտի ըլլաս :

ՎԱԿ. (Չարացմաթ ելլելով) Քեզի՞ համար . . . չեմ ուզեր :

ՄԱՐԴ. Բայց ես կուզեմ :

ՎԱԿ. Ատ ուրիշ խօսք :

ԲԱՐ. Դէմ չդնե՛ս :

ՎԱԿ. կը զիմաղրիմ . . . դուն գնա՛, Բարա՛կ :

ԲԱՐ. Եւ ատոր Մարդ անունը կուտա՛ն :

ՄԱՐԴ. (Անհամբեր աւ Բար.) Շո՛ւա, չերթա՛ս :

ԲԱՐ. (Չարացմաթ) Որո՞ւ կրսես :

ՄԱՐԴ. Քեզի :

ԲԱՐ. Ի՞նչ, կուզես որ ես . . .

ՄԱՐԴ. Դե՛ս կեցե՞ր ես :

ԲԱՐ. (Պարզամտութեամբ) Լա՛ւ , երթա՛մք : (Գիտեալն ինչ յոյժն է) :

ՎԱԿ. Գոնէ կաթասային մէջ ամբողջ գառնուկ մը նետած չըլլայի՛ (Մեքէնթեօն Գոնէն ինչ յոյժն է) :

ԲԱՐ. (Գառն) Պատարապի ժամանակ զինի չը ծախուիր եղեր :

ՄԱՐԴ. (Արեւի) Ահա՛ Գոնարինէ :

ՄԵՑ. Ֆառուսան ալ : Իրարու կորստեանն Արատ ճառ ըլլան պիտի և մէկ հոգւոյ տեղ երկու ճառ որ պայած կըլլամ . կեցիր :

(Աջէն կերէն) :

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ , ՖԱՈՒՍՏ , ԳՈՂԱՐԻՆԷ (Եկեղեցիէն Ելած որունը կերէն , աղբիէն Գիտն է յեռն) :

ՖԱ. Ո՛հ , որչափ առատութեամբ սիրեր ես կեանքը , Աստուած ամենակալ :

ՄԵՑ. (Գոնարին յոյժնալով) Կերդնո՛ւմ աւելի սիրունիկ աչքեր բնաւ տեսած չէի :

ԳՈՂ. Ի՛նչ կուզես :

ՄԵՑ. Համբոյր մը :

ԳՈՂ. Ի՞նչ կը լսեմ , չեմ հասկնա՛ր ըսածդ :

ՄԵՑ. Սորվեցնեմ , սիրուն տղէտ :

ԳՈՂ. (Փախիլ ուլուլ) Ա՛հ պաշտպանէ զիս Տէ՛ր :

ՖԱ. Գեղեցիկ կոյս (Արեւի) Օ՛ն անդր , քաջուէ՛ :

ՄԵՑ. Մեծարանքս դիտուն ձերունոյն : Զեռքըդ եմ պագեր , օրիորդ : (Կը բարեւ . յոյժն է) Հիմա

կը բռնուին . (Մարդունին նշան կընէ որ երեւելի քայ) :

ՖԱ. (Հիացմամբ Գոնարինէ երեսը նայելով կը կենայ) :

ԳՈՂ. Շնորհակալ եմ , Տէ՛ր . . . Ինծի կը նայի՛ բայց չլսեր . . . ողջամբ մնա՛ , Տէր իմ : (Ելանէ) :

ՖԱ. (Վարանմամբ երեւելի նայելն վերջը) Ա՛հ , որպիսի անուշ ձայն մը եկաւ թմբութենէս արթնցնել զիս ու ցցուց թէ ի՛նչ խոր վիճի մէջ ինկած եմ , և մանկութեանս յուսոյ վերջինն ալ փարատեց սրտէս : Որովհետեւ այդ քաղցր նայումքը կայծակի նման կը զարնէ ու կը կործանէ զիս՝ կանխեմ ամէն ցնորք որ հոգւոյն շուրջը պարելով կը քաշկուտեն կը նետեն այս ազատալի անդհոյց մէջ : Անէ՛ժք այն վրասեմ գաղափարին՝ որուն զօրութիւնը կը շրջապատէ զիս . . . Անէ՛ժք այդ շքեղ երեւոյթից որ մեր զգալարանքները կը գիւթեն , անէ՛ժք ամէն անրջոց , փառաց և անամաութեան տեսիանց : Անէ՛ժք ամէն ըստացումքի , կնոջ , տղու , սպասաւորի և սայլի . . . Անէ՛ժք մամոնայի , և իր գանձերուն որ մեր արիւթիանց շարժառիթն են . . . անիծեալ զինին և իր զմայլանքը . . . անիծեալ՝ սէրը և իւր գգուանքը . . . անիծեալ ըլլան յոյսն ալ , համբերութիւնն ալ . . . :

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆ և ՄԵՑԻՍԴՈՅԷԼ (Մեջ Կեղեցի Ելուլով) :

ՄԵՑ. Տխուր ես :

ՖԱ. Զքեղ կը բնառէի , առաջարկութիւններդ բրէ՛ տեսնեմ :

ՄԵՑ. Կը տեսնե՞ս , ի՞նչ առօք փառօք զարդարումս եմ ազնուականի մը պէս . . . փետրազարդ փե-

դոյր , թաւիչեայ պատմունճան , սպարաւյր թուր մը : Այսպէս կուզեմ զգետտուորել զքեզ , և այս ծաղիկ հասակը տալ քեզ :

ՖԱ. Իրեն հաճոյ ըլլա՛լ , ո՛վ երջանկութիւն :

ՄԵՖ. Յայտնի խօսէ՞ ինձի պէս :

ՖԱ. Միթէ արտաքէն տեսքը վտփոխելով պիտի նուազի՞ն այս երկրաւոր կենաց տառապանքը : Չափազանց ծեր եմ միայն զբօսանաց խորհելու համար չափազանց երիտասարդ՝ բնաւ փափաք չունենալու համար : Ինչ կայ տալ աշխարհ . « Զրկուելու է , համբերելու , սպասելու է , ա՛յս է , ա՛յս է յաւիտենական երգը՝ զոր իրաքսնչիւր ժամ մեր ականջն ՚ի վար կը փափայ ու կանցնի : Սարսափով կարթննամ առտուն . դառն արցունքներով կը տեսնեմ օրը՝ որ իբր ընթացից մէջ չկրնար բազմանք մը լրացնել , որ ընդհակառակն՝ իմ մտացս ծնունդներն ալ կոչնչացընէ : Յետոյ երբ գիշերն հասնի՝ անձկութեամբ անկողինս կը մտնեմ . հոն ալ հանգիստ չկայ . անկ անուրջներ չորս դիւ կը թեւածեն , սրտիս մէջ բնակող Աստուածը մրրիկներ կը յարուցանէ ներսէն՝ բայց գրսէն անկարող է . . . անոր համար կեանքն ինձ բեռ դարձած է :

ՄԵՖ. Եւ սակայն մահը ոչ մէկուն սիրալիր հիւրն է :

ՖԱ. Ի՞նչ , երանի՞ անոր՝ որուն վրայ յանկարծ կը հասնի մահը երբ յաղթական մրտենիք իր արիւնսուոզ գէմքը կը պսակեն . անոր՝ զոր սիրատարփ պարահանդէսին յորձանաց մէջ , աղջկան մը առոյգ լանջաց վրայ կը դարնէ՝ դեռ սիրոյ խօսքը ամբողջ չաւարտած . . . և ինձ երանի՞ եթէ վրաս հասած ըլլար երբ Աստուածութեան մտածութեամբ յափշտակեալ կըզմայլէի :

ՄԵՖ. Ատոնք խօսք են՝ բարեկամ . մենք մեր խնդրոյն գանք . պայմաններս գիտե՛ս , կընդունի՞ս :

ՖԱ. Ի՞նչ կընաս տալ ինձի , թշուառ ողբ . . . կարո՞ղ ես պարունակել միտքը իր անսահման ընթացից մէջ . ի՞նչ է տուածդ , կերակուրներ՝ որ չեն կշտացըներ . ոսկին՝ որ շատ անգամ դարչութեանց վիհեր կը ծածկէ . աղջիկ մը՝ որ գիրկս եղած միջոցին՝ օտարի մը աչք կընէ :

ՄԵՖ. Գոհարինէն կը ճանչե՛ս . . . Տէ՛ր , կուզէի՞ր . . .

ՖԱ. Ա՛հ , տուր ինձ զայն . և թող այնուհետև մահուան զանգակը թնդայ . թող այն օրը արեւը ժամ մ՛ աւելի կենայ երկնից վրայ և այնուհետև լրացած ըլլայ ինձի համար ժամանակը . . . :

ՄԵՖ. Լաւ խորհեցա՞ր . . . ազատութիւնդ . . . :

ՖԱ. Այս երկրիս վրայ միշտ գերի եմ . ի՞նչ փոյթ որ քուկդ ըլլամ կամ ուրիշի մը :

ՄԵՖ. Հոս արեամբդ ստորագրէ՛ :

ՖԱ. Ո՛վ սարսուռ , ո՛վ քստմենելի վայրկեան . . . և սակայն ի՞նչ փոյթ . . . մինչև հիմայ ծանօթը թըշուառ էր , նետուի՞նք անծանօթին գիրկը : Ուրացաւ զիս Ամենակալը , բնութիւնը մերժեց զիս , ալ զըզուեցայ գիտութենէն . Թող կրից դժոխքը չորս կողմս բորբոքի . . . դիւթութիւնք մոզեն զիս . . . ժամանակայ յորձանքներուն մէջ մտնենք . թո՛ղ ցաւ ու հաճոյք , յաջողուած ու կսկիծ իրարու յաջորդէն խառնի խուռն :

ՄԵՖ. Երթա՛նք աղէ՛ : ուր ժպիտ ու զուարթութիւն կը սպասեն քեզ :

ՖԱ. Ո՛չ , բնտուածս երջանկութիւն չէ՛ . անձնամասն կըլլամ մրրկին , ատկութիւնը կուզեմ՝ որ կը

սիրէ , վհատութիւնը որ կը խրախուսէ : Միշտս գոց-
ուեցաւ լուսոյն և ցաւոց մթութիւնը կը խնդրէ . ա-
կանջներս ծարւած են արտասուաց և ողբոց ներդաշ-
նակութեան : Երկինք գոց են ինծի , չարեաց վիճի
մէջ գահալիթինք՝ և թաւալինք անհուն ունայնու-
թեան մէջ . . . :

ՄԵՑ. Դու իմս ես , Ֆառուս . և հիմայ ծերու-
թեան ձիւները հալելով գլխէդ՝ երիտասարդութեան
գարունը ճակատդ պիտի պահկէ :

(Մոռեալն նշան մը կընէ և դեարունը կը յեղափոխէ) :



ՊԱՏԿԵՐ Գ.

ԱԻՆՐԱԿԻ

Ամպերով մթնցած է տեսարանը . տկար լոյս մը , մէջ
տեղը կաթնայ մը լուսաւորէ որ պետք է վերջը անհետ ըլլան :

ՊԱՐ (ՆԵՐԷՆ)

Մահիկ լուսընկած

Լերանց յարտեւան

Հրրաչէկ ծաղի . . .

կարծես մէկ սուսեր

կորացած յիթեր

Մըլխալ ի վըհի . . .



ՏԵՍԻԼ Բ.

ՎԱԿՆԷՐ • ԲԱՐԱԿ

ԲԱՐ. (Վախերայ երևէն Կալեւով) Հոս ի՞նչ ընկու-
եկաք , Տէ՛ր :

ՎԱԿ. Ինչ եկա՞նքն ինչ է . իմ գերիս Մարդուկն
է որ փափաք յայտնեց . . . չգիտեմ . . . (Մէկուսէ) Ա-
պերախտ զաւակ . . . մայր մը ինն ամիս միայն ցաւոց
փոխարէն այնչափ սէր կընդունի . . . Ես . . .
երեսուն տարի է որ կը յղանամ և անա ստեղծածիս
պէս . . . ան . . . :

ԲԱՐ. (Վախով) Ես հոս շատ ապահովութիւն չեմ
զգար . Տէ՛ր , իսկ հրամանքդ . . . կը վախնաս . . . :

ՎԱԿ. Վա՛խ , առ ինչ իս օսք է . . . երբէք . . . :

ԲԱՐ. Երանի քեզի . (կը սարսափէ) :

ՎԱԿ. (Խորէն երեւ ուրուսիանէ կանցնին) Ո՛չ , ո՛չ
երբէք . — չու . . . Ադ ի՞նչ է . . . իսկ . . . հասցա . . .
բայց . . . Բարակ . . . կը սարսափս . . . :

ԲԱՐ. Վախուս չէ՛ . . . աս իրիկուն սաստիկ
ցուրտ կայ :

ՎԱԿ. Երբէք չե՞ս վախնար դուն :

ԲԱՐ. Միշտ . . . սովորութիւնը չկորսնցնելու հա-
մար բայց աւելի հանդիստ իրիկուններ ալ անցուցեր եմ
. . . (Մէկուսէ) Մտի՛ր անկողինդ , դուռը գոցէ՛ , վրադ
քաշէ՛ վերմակդ . . . հոս ի՞նչ գործ ունիս . . . ան գիտու-
թիւն պիտու՛թիւն . . . քու ըրածներդ ե՞ն ատնք :

ՎԱԿ. (Այլ ևս ուրուսիանէ՛ սրտն պրտերէ փայն
լէ դեանալն) : Ո՛հ :

ԲԱՐ. (Սարսափով) Հէ՛ :

ՎԱԿ. Զարհուրելի . . . :

ԲԱՐ. (Անոր հպելով) Ի՞նչ . . . :

ՎԱԿ. Ահարկու . . . նա . . . նայէ . . . :

ԲԱՐ. (Նայեալ) Ինչո՞ւ . . . ինչ . . . ո՞ւր . . . նա . . . նայիմ թէ որ . . . ահարկու է . . . բայց դու որ չէիր վախնար . . . կարծեմ . . . կը դողդղաս . . . :

ՎԱԿ. Վախուս . . . չէ՛, չէ՛, չէ՛, բայց ջղրտ եմ : (Ուրիշ արտասուքով ալ կանչելն է :)

ԲԱՐ. (Աջէն նայելով) Տէ՛ր . . . Տէ՛ր . . . :

ՎԱԿ. (Զարհուրելով) Բար . . . Բար . . . Բար . . . ալ :

ԲԱՐ. Ա . . . ա . . . ա . . . ջէն :

ՄԱՐԴ. (Ներս կը ծռէ, արտասուքով շարժելով) Առու-
թիւն , ո՞վ է տաճա մէջ այդ աղմուկը հանողը :

ՎԱԿ. Ձեր տունը . . . ո՞վ էք դուք , Պարոն :

ՄԱՐԴ. Այս տեղուց տէրը :

ԲԱՐ. Տէ՛րը . . . ուրիշ բնակարան մ' ալ կ'ընայիր
ընտրել :

ՎԱԿ. Ի՛նչ արտառոց կերպով դալդ կը յայտ-
նես . . . քիչ մնաց պիտի վախնայի :

ԲԱՐ. Այո՛, քիչ մնացեր էր , շատ քիչ :

ՄԱՐԴ. Ուրեմն վատասիրտ էք . . . կը ճանչ-
նամ զձեզ . . . :

ՎԱԿ. Ահա՛ , զձեզ կը ճանչ . . . կաղաչեմ . . . այն
ատեն ըսէիք մեզի թէ ի՞նչ ընելու եկանք հոս :

ՄԱՐԴ. Երկուքդ ալ հոս խրկուեցաք ձեր երե-
ւելի Ֆառաս դաստուրին ծառայութիւն մը մատու-
ցանելու համար :

ԲԱՐ. Բայց , Վսեմափառ Տէ՛ր . . . ի՞նչ կերպով կըր-
նանք Ֆառաստայ ծառայութիւն մատուցանել :

ՄԱՐԴ. Հոս պիտի դայ որ տարեաց բեռը ուսէն
վար առնեմ :

ԲԱՐ. Երիտասարդնա՞լ կուզէ :

ՄԱՐԴ. Այո՛ :

ՎԱԿ. Եւ այդ հրաշքը գործել հնա՞ր է :

ՄԱՐԴ. Գիտութեան առջև անկարելի բան չկայ ,
բայց որովհետեւ ժամանակն օլ չկրնար իւր իրաւունք-
ները կորսնցնել , Ֆառասէ առնուած տարիները ու-
րիշի մ. վրայ պէտք է ծանրանան :

ՎԱԿ. Վա՛յ ան ուրիշին զլիսուն . . . բայց ադ
ուրիշը ո՞վ ըլլայ պիտի . . . :

ՄԱՐԴ. Ո՞վ , հոս երկու հոգի է՛ք :

ԲԱՐ. Ո՞ր թշուառը պիտի ժառանգէ ադ :

ՄԱՐԴ. (Ցած արտասուքով) Հոս միակող չեկար :

ԲԱՐ. (Վախնելով) Ա՛հ :

ՎԱԿ. (Մէկ.) Խեղճ Բարակ :

ԲԱՐ. (Մէկ.) Խեղճ Վախնէր :

ՄԱՐԴ. Հիմայ գործերնուս նայինք (Զանգուտ
էր կը գայլէ արտասուքով) Հեռացէ՛ք , ձեր ժամն
հասաւ :

ՎԱԿ. Անյապաղ . . . — եկու Բարակա , եկուր
թշուառ Բարակ . . . :

ԲԱՐ. Այո՛ , երթանք , Տէ՛ր :

ՎԱԿ. Ի՞նչ կելլայ աղւոր դէմքէ մը . . . երիտա-
սարդութենէ :

ԲԱՐ. Գեղեցիկ հոգի մը , ամէն աղւորութենէ
ընտրելի է :

ՎԱԿ. (Մէկ.) Գործը հասկցած ըլլալու է :

ԲԱՐ. (Մէկ.) Գլխուն դալիքը դիտէ՞ արդեօք :

ՄԱՐԴ. Շուտ ըրէ՛ք և քիչ ատենէն կը վերա-
դառնաք :

ՊԱՏԿԵՐ Դ.

(Մեծ ճայթմունք մը կըլլայ և անսխալ տեսարանին վրայէն ամպերը փարատելով հրաշագեղ պարտեզներ կտեսնուին ուր խումը խումը յաւերժահարսունք կուզան , ծաղկտապակք , քնարի անուշ երգեր կը լսուին : Վերջը կուգան)

ՏԵՍԻՆ Ա.

ՖԱՈՒՍ Երբորասարայացի ՄԱՐԳՐՈՒԿ . ՄԵՖԻՍ-ԹՈՅԵԼԷՍ . ՎԱԿՆԵՐ . ԲԱՐԱԿ Ծերայացի , ՀՍՐՍՈՒՆԲ

ՄԱՐԴ . Տե՛ս , ո՛վ Ֆաուստ , քեզի ընծայուած բարիքները :

ՎԱԿ . (Յարաջ գալով) Երիտասարդացեր է . . . Ի՛նչ բաղբ . . . :

ԲԱՐ . Յարաջ գալով Ինքն ալ մեզի պէս երիտասարդ ու աղւոր եղեր է :

ՎԱԿ . Բոլորովին մեզի պէս :

ՖԱ . (Լճակէ մը մէջ երեսը նայելով) Ե՞ս եմ արդարեւ . . . Ի՛նչպէս երակայս մէջ արիւնը կը խլրտի . Այս եռանդուն կեանքը որ կը թեւաւորէ գիս , իմ կեանքս է արդարեւ . . . իմ կեանքս՝ որ վայրկեան մը առաջ գերեզմանի ստուերաց մօտ կը դայթէր՝ և հիմայ նոր աշխուժով կարծարծի : Արդեօք իմ դլխէս հալեցա՞ն տարեաց սառնամանիք՝ թէ բնութիւնը , տիեզերքն ու ժամանակ քայլ մը յետս դարձան . . . Եթէ անուրջ մը չէ որ կը խաբէ աչքերս՝ ողջո՞յն քեզ երկիր որ բոլոր ծիծաղներովդ կը ժպտիս ինձ . բայց

եթէ անուրջ ալ է՝ ի՛նչ փոյթ . . . ա՛ն . կեանքն ալ անուրջ մը չէ՞ :

ՄԵՖ . Ֆաուստ , այնպիսի տեղ մըն ես՝ ուր ամէն խնդիրդ ամէն փափաքդ անյապաղ կը կատարի :

ՖԱ . Ի՞նչ կը բերէ այդ նաղելի աղջիկը :

ՅԱԻԵՐԺ . (Կը ծոթենայ կողովէ մը մէջ արասմարեայ շարքերով) :

ՄԵՖ . Ահաւասիկ հարստութիւնը . հոս կրնաս այնչափ ինչք ստանալ՝ որ եթէ տասնապատիկ մարդու կեանք ունենայիր , շոտայութեամբ վատնելով չէիր կրնար սպառել :

ՖԱ . Միթէ երջանկութիւնը պալատնե՞ր կուզէ բնակութեան համար . . . պզտի հրեշտակ մ'է այն և խրճի մէջ ալ կամիրտիր :

Բ . ՅԱԻ . (Կը ծոթենայ կողովէ մը մէջ սար մը և դափնէ պտի մը) :

ՄԵՖ . Ահա քեզի փառքը , Աղեքսանդրի սուրբ և կենարու դափնիները կրնաս ստանալ :

ՖԱ . Մին օտար աստեղաց տակ՝ հայրենեաց կարօտը քաշելով մնում , իսկ միւսը՝ սուսերահար ,

Գ . ՅԱԻ . (Կը ծոթենայ լափ և գաւառն է կողովէ) :

ՄԵՖ . Թագաւոր եղիր և աշխարհ դողայ դօրութենէդ :

ՖԱ . Միթէ թիկնապահներս պիտի կարենա՞ն հալածել քովէս խղճին յարուցած ճիւղները :

Դ . ՅԱԻ . (Վարդերով գոգնոցը Լցոցած) :

ՄԵՖ . Ահա դիւրաթառամ վարդ մը և անվերջ փշեր . . . Սէրը . . . :

ՖԱ . Սէ՛րը . . . :

ՄԵՖ . Եւ վիշտք . . . :

ՖԱ. Գոհարինէն և անմահութիւն . . . ո՛հ սէրը կընարեմ՝ :

ՄԵՖ. Սէրը շնորհեցի օեզի . . և իր անուշ պատերազմները :

ՖԱ. Գեղեցիկ է այս դրախտը , այս հարսուէր զմայլելի . բայց խրճթի մը կարօտցաւ հոգիս . խրճթի մը՝ վրուն մէջ Գոհարինէ կը բնակի :

ՄԵՖ. Երթա՛նք հոն . (կէրևան) :

ՖԱ. Ո՛վ երջանկութիւն . . . :

ԲԱՐ. Մենք ալ երթանք (Իրարու երես Կատարի) :

ՎԱԿ. Տէ՛ր Աստուած :

ԲԱՐ. Ո՛վ սանդարամէտ . ժառանգութիւնը քեզի է ինկեր :

ՎԱԿ. Վահ իմ խեղճ Բարակո . . . պիտի տեսնէի գձեղ . . . :

ԲԱՐ. Իեղճը ո՛վ է , աղէկ նայէ :

ՄԱՐԴ. (Երկուքէն ալ Կոյէի հայելի յըջիէ) Զիրար մ՛ամբաստանէք :

ՎԱԿ. Ե՛ի ԲԱՐ . (Ցաւաբէն աղչումբէմբէ) Ա՛հ . . . (Կէրևան) :



ՄԱՍՆ Բ.

Վ Ա Յ Ե Լ Ք



Պ Ա Տ Կ Ե Ր Ա.

(Ընդարձակ ծառաստան մը . աջէն պարզ խրճթի մը սե- նեակը որուն դուռը կը բացուի . ճականակ մը կայ ներսէն անկողնոյ վարագոյր մը .)



Տ Ե Ս Ի Լ Ա.

ՖԱՌԻՍՏ և ՄԵՖԻՍՌՈՖԵԼԷՍ

ՖԱ. Ի՞նչ , գեռ աղջիկը չեկա՞ւ :

ՄԵՖ. Իր տունը կը տեսնե՞ս , հոն սողոսկեցայ ստուերաց մէջէն և նկատեցի զինքը , գլուխը ճերմակ թեւերուն կոթնցուցած բան մը կը մրմնջէր : Մօտեցայ , աղջիկը կը ժպտէր ու կաղօթէր , իր ժըպիտը հալածեց զիս . . . :

ՖԱ. Եւ սակայն հազիւ տասն և չորս տարեկան կերեւայ :

ՄԵՖ. Այդ հրեշտակային ճակտէն անմեղու թեան ճառագայթներ կեղնն և զիս կը վիրաւորեն :

ՖԱ. Որչա՛փ խօսք . . . : Եթէ աղջիկը այս գիշեր իմ սիրոյս անձնատուր չըլլայ , կը բաժնուի՞նք :

ՄԵՖ. Յարձակմամբ առնուելու բերդ չէ , խորամանկութեամբ մերձենալու է :

ՖԱ. Այդ երկնաւոր գանձէն բան մը ճարէ՛ ինձ .

վարչամակ մը իր պարանոցէն , շիւղի կտոր մը՝ ուրուն վրայ կոխած ըլլայ :

ՄԵՑ. Նախ ընծայով մը իր անմեղութիւնը կաշառակուրծ ընենք . . . : Քաշուխք , կը մտանայ :

ՏԵՍԻԼ Բ.

ԳՈՅՆԲ (Ա՛ռե՛ս) ԳՈՂԱՐ (Մ՛աչէրը յարարելով)

ԳՈՂ. Ի՛նչ կուզէի զիանալ թէ ո՞վ է այս օրուան Պարոնը , ո՞վ զիտէ որ աշուռականին սղան է . (կերէս) :

ՄԵՑ. Ես երթամ բան մը գտնելու : (կերէս) :

ՑԱ. (Շուրջը նայելով) Ողջո՞յն , մաքուր լոյս , որ սրբավայրիս մէջ կը ախրես , լցուր սերտս՝ քաղցր վիշտ սիրոյ՝ որ յուսոյ ցօղով կը մտանիս . ինչպի՛սի խաղաղութիւն , կարգ , և գոհունակութիւն կը չնչէ հոս ամէն բան : Այս աղքատութեան մէջ , ս՛րջափ առատութիւն , ս՛րպիսի երջանակութիւն այս բանտիս մէջ : (Բազմոցէ մը վրայ ներսուրելով) Ո՛հ , ընդունէ զիս , դու որ բաց թեւերուդ մէջ ընդունեցար հոս ալեւորները՝ իրենց բերկրութեանց և վշտաց մէջ : Այս նահապետական գահուն վրայէն , քանիցս արդեօք կախուեցան սիրալիր երամբ մանկանց : Հո՛ս իսկ թերեւ՝ երախտագէտ առ Աստուած որպի՛ն՝ բուրդոյն չըթամը սիրուհիս եկաւ մեծ հօրը թողմամբ ձեռքը համբուրելու : (Անկողնոյն վրայ վերցնելով) Ի՛նչ ցնորք կը տիրեն վրաս . . . հո՛ն , ո՞վ բնութիւն , թեթեւ անբջովք ամբողջացուցիր այդ մարմնաբնակ հրեշտակը . . . հո՛ն ժպտեցաւ նախ՝ իր մօրը բերնէն կաթը թափթփելով , հո՛ն թերեւ երազոց թոյլ

թեւերով միտքը երկնաւոր վայելից մէջ սլացաւ . . . : Բայց ո՞վ առաջնորդեց քեզ հոս . . . Ի՞նչ խորին այլալուրթիւն կղզաս , ի՞նչ եկար հոս ընելու , թըռուառ ֆառուս . . . կըքերու մորիկը կը խնդրէիր : Հոս սուրբ անդորրութիւն մը կը տիրէ . . . և եթէ յանկարծ ներս մտնէր այն գողտր աղջիկը ինչպէ՛ս կըզգեսնէիր անոր առջև՝ ո՞վ մեծ մարդ :

ՄԵՑ. (Համելով) Շո՛ւտ , ահա գանձը , աս գզրոցին մէջ կը դնեմ . վախչինք , տե՛ս կուգայ (Ելանէն) :

ԳՈՂ. (Մտնելով Լապտեր է յետին) Ի՛նչպէս հեղձամղձուկ է հես օղը , և սակայն դուրան այնչափ տաք չէ : Չեմ գիտեր ի՛նչ բան կըլլամ : Մայրս ալ գեռ չեկաւ , սարսուռ մը կղզամ : Խե՛նդ , ի՞նչ կայ վախնալու : (Հանուելով կերպէ : Երաշտութեանը կիսայնի կը հոսաքէ : Հոգոտարները պահելու համար քղցր բանուով քոհարներու որո՞քը կը տե՛նէ) Ի՞նչպէս այդ տուփը հոս կը գտնուի . . . Ես գզրոցս գոցեմ էի . զարմանալի՛ բան , մէջը ի՞նչ կայ արդեօք : Արդեօք մօրս գրաւ բերեր են փոխ ստակ առնելու համար . բանալին ալ լարով մը կախուած է . . . ափկայ բանալի . . . Ի՛նչ կը տեսնեմ , Սո՛ւրբ Աստուածամայր , կեանքիս մէջ առտանկ բան տեսած չէի . . . հարուստ տիկնոջ մի՛սկ տօնի մը օր պարծանք կրնայ ըլլալ աս . . . նայիմ սա մանեակը ինձի կը վայէ՞ . . . : Արդեօք որո՞ւն գանձնէ այս : (Չարտարութեամբ նայելուց կերէս) Գոնէ սա օղերը իմն ըլլային , մարդ ուրիշ կերեւայ աստեղմով : Ի՞նչ է աղորոթութիւնը . մէկը հօգ չընէր , բարեւ մ՛ալ տան ողորմութեան պէս է : Ամէն բան ոսկուոյն կերթայ ոսկիէն կախումն ունի : Ա՛հ , ի՛նչ խեղճ ենք . բայց ահա Մարթա գրացիս կուգայ :

ՏԵՍԻԼ Դ.

ԳՈՂՄՐ Լ ՄԱՐԹԱ

ՄԱՐԹ. Իմ սիրելի ամուսինս , լոյս էջնայ հոգուն , ամենեւին աղէկ չվարուեցաւ հետս . ասանկ ալ կին մը մինակուկ ձգելով գլուխն առնել երթալ կըլլա՞յ եղեր : Գոնէ օր մը իրեն ծանրութիւն մը տուած ըլլամ . . . Աստուած գիտէ որ սրտանց կը սիրէի : (Կոլոս.) Մեռա՞ւ կըսես . . վա՛յ ինձ , գոնէ մեռնելուն յայտագիրն ունենայի :

ԳՈՂ. Մարթա՛ :

ՄԱՐԹ. Ի՞նչ կայ , Գո՛նա՛րիկս :

ԳՈՂ. Ծնկուըններս չեն բռներ . . : Սա գգրոցիս մէջ նայէ՛ , ինչէ՛ր գտայ :

ՄԱՐԹ. Ողորմութի՛ւն Աստուծոյ . . չելլաս մօրդ ըսես , աղջի՛կ , կելլայ Քահանայից պատարագցու կը խրկէ :

ԳՈՂ. Նայէ՛ ու դարմացի՛ր :

ՄԱՐԹ. (Զարբարելէ՛ւզ զԳոհար .) Ի՛նչ ալ ալւոր վայլեց երեսիդ :

ԳՈՂ. Մեղք որ ասանկ փողոցը չեմ կրնար ելլել :

ՄԱՐԹ. Տունս բե՛ր ասոնք , ամէն օր կը զարդարուիս ու կը խնդաս տօնի ու հանդիսի օրերն ալ օր մը մէկը օր մը միւսը դնելով զբացիները կը վարժին . մօրդ ալ պատմութիւն մը կը շինեսք . . :

ԳՈՂ. Բայց ո՞վ է այդ բերողը . ասոր տակ բան մ'ըլլալու է : (Գոհարը կը զարնէն իջե՛ծ :) Ա՛հ , կի՛թէ մայրըս ըլլա՛ր . . . :

ՄԱՐԹ. Օտարական մ'է . . . Հրամեցէ՛ք :

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ Լ ՄԵՑԻՍԹՈՑԵԼԷՍ

ՄԵՑ. Ներեցէ՛ք համարձակութեանս , Տիկնայք , (Գոհարէնէ՛ն աւջէն յարգու՛տ կը տալու՛ի :) Հո՞ս է արդեօք Լուսնեան Մարթա Տիկինը :

ՄԱՐԹ. Ես եմ , Պարո՛ն , ըսելիք մ'ունի՞ք :

ՄԵՑ: (Յա՛ջ աւ Մարթա .) Զձեզ ճանչնալս բաւական է . . . աղնուական այցելու տիկին մ'ունիք . . . Թողութիւն ըրէ՛ք համարձակութեանս , վերջը կու գամ :

ԳՈՂ. Աղքատիկ աղջիկ մ'եմ , Պարոնին աղնուութիւնն է . . . այո , աս գոհարներն իմս չեն :

ՄԵՑ. Գոհարներէն ի՞նչ կելլայ . օրիորդին կերպերը , և իր ազդու նայուածքը . . . շատ ուրախ կըլլայի եթէ հոս մնալ կարենայի :

ՄԱՐԹ. Ի՞նչ լուր կը բերես . անհամբեր եմ :

ՄԵՑ. Աւելի գուարթ լուրեր կուղէի հաղորդել ձեզ , բայց կը յուսամ որ յանցանքը ինծի չէ՛ք տար . . . Զեր ամուսինը մեռաւ և զձեզ կը բարեւէ :

ՄԱՐԹ. Մեռա՞ւ , ա՛հ ազնիւ ամուսինս , ողորմութիւն Աստուծոյ , էրիկս մեռա՞ւ ալ չեմ գիմանար :

ԳՈՂ. Ո՛հ այդչափ մի՛ յուսահատիր , Տիկի՛ն :

ՄԵՑ. Լսեցէ՛ք այս ցաւալի պատմութիւնը :

ԳՈՂ. Ատոր համար բնաւ սիրել չէի ուզիր . այդպիսի կորուստ մը կը սպաննէր զիս :

ՄԵՑ. Ամէն հաճոյք իր ցաւերը . ամէն ցաւ ալ իր հաճոյքներն ունի :

ՄԱՐԹ. Պատմէ՛ ինծի իր վերջին վայրկեանները :

ՄԵՑ. Փատուա քաղաքը մեռաւ , Սուրբ Անտօնի

եկեղեցւոյն մօտ . Սրբազան տեղ մը , պող անկողնոյն մէջ յաւիտենական քոնը կը ննջէ :

ՄԱՐԹ. Իրմէ բան չն՞ս բերեր ինձ :

ՄԵՖ. Ծանր ու կարեւոր աղաչանք մը , իր հօգւոյն համար երեք հարիւր պատարադ ըսել տալու ես . սակէ զատ քսակներս դատարկ են :

ՄԱՐԹ. Ի՛նչ , պզտի գոհար մ՛ալ ըլլայ չկա՞յ անանկ բան մը՝ զոր յետին գործաւորն խկ՝ իբրեւ յիշատակ կը պահէ՝ թէ և մուրայ , թէ և անօթի մեռնի :

ՄԵՖ. Շատ կը ցաւիմ , Տիկի՛ն , բայց չիտակը խօսելով ստակ չէր բռներ , շատ զղջաց ըրածներուն վրայ , և մանաւանդ իր դժբաղդութեան վրայ լացալ :

ԳՈՀ. Աւանդ , ինչո՞ւ այդչափ թշուառ են մարդիկ : Ես ըլլայի տեղդ հողւոյն համար շատ աղօթք ընել կուտայի :

ՄԵՖ. Ամուսնութեան արժանի աղջիկ մ՛ես , այնչափ սիրունութիւն կայ վրայ :

ԳՈՀ. Չէ՛ , ատիկայ ինձի գեռ չվայլէր :

ՄԵՖ. Ամուսին մը չէ՛ նէ՛՞ զոնէ առ այժմ սիրական մ՛ունենալու ես : Քեզի պէս սիրուն էակ մը գրկաց մէջ ամիտփիւ կը ջանկութիւն մ՛է :

ԳՈՀ. Մեր գեղը այգպիտի սովորութիւն չկա՞յ :

ՄԵՖ. Սովորութեան մի՛ նայիր , այգպիտ բաներ յարմարցնելու է :

ՄԱՐԹ. Չպատմն՛ս ինձ :

ՄԵՖ. Մահուան անկողնոյն քոյն էի , աղբանոցէ տարբերութիւն մը չունէր . փտած յարզի կոյտ մը՞ բայց քրիտոնէաբար մեռաւ , ու կըսէր թէ այնչափին ալ արժանի չէ՛ : Ա՛հ , կըսէր , որչափ պարտաւա-

նաց արժանի եմ որ գործս ու կինս երեսի վրայ ձգեցի : Այս մտածութիւնը զիս կտպանէ... զոնէ այս աշխարհիս վրայ կնոջս ներս՛ւմն ընդունէի :

ՄԱՐԹ. (Արտասուքով) Ազնի՛ւ հողի , . . շատնց ներեցի ես իրեն :

ՄԵՖ. «Բայց Աստուած գէտէ . յանցանքը աւելի իրենն է քան թէ իմն :»

ՄԱՐԹ. Ատ ահա սուտ է . . . գերեզմանին մօտ ստե՛լ . . .

ՄԵՖ. Ինձի ալ կը թուի թէ՛ վերջին վայրկեաններուն կը բանդագուշէր : «Վայրկեան մը հանդիստ չունէի , կըսէր , նախ տղայ ունենալու խնդ էր , և ետքը ան տղաքը սնուցանելու , անոնց հաց ճարելու հողն ունէի... զոնէ հանդիստ պատատ մը կարենայի բերանս դնել :»

ՄԱՐԹ. Ինչպէ՞ս ալ կըցեր է շուտ մը մտնալ այնչափ հաւատարմութիւն , այնչափ սէր՝ դիչեր և ցորեկ :

ՄԵՖ. Չէ՛ , անտարակոյն օրտանց ստոր մտածեցի «Մարթայէն մեկնած ժամանակս կըսէր , եռանդեամբ կաղօթէի կնոջս և զաւակներուն համար . և խոտոտվանելու եմ որ երկինք նպաստաւոր եղան ինձ , վասն զի ծովուն վրայ վաճառականի նաւ մը բռնեցինք և քաջութիւնը վարձատրուեցաւ . ես ալ իմ բաժինս դուրնսեցայ :»

ՄԱՐԹ. Առածն ո՞ւր է , ո՞ւր պահեր է :

ՄԵՖ. Հովէն եկածն հովի կերթայ : Նէապոլսոյ մէջ պտրտած ստեն ալուրիկ աղջիկ մը ասոր զարնուեր է և անոր շատ գորով ու սէր ցցուց մինչև կենացը գալիճանը :

ՄԱՐԹ. Անպիտան սրիկայ, իր զաւակներուն գողը : Այսպէս ուրեմն բոլոր գլխուն եկածները չը կրցան իր անօրէն կեանքէն ետ կեցնել :

ՄԵՑ. Բայց մեռաւ ալ : Եթէ քու տեղը ըլլայի, սովորական սուգ բռնած միջոցիս նոր գանձ մը բընտրուելու կը նայէի :

ՄԱՐԹ. Ողորմութիւն Աստուծոյ . առջի էրկանս պէս էրիկ- գտնելը գիւրին բան չէ . իրաւ քիչ մը փախուկ էր , բայց սրտին խօսք չունիմ . յոնցանքը ի՞նչ էր ... ճամբորդութիւնը, օտար կնիկները , օտար գինին և ատ անիծեալ նարտի խաղը քիչ մ' աւելի կը սիրէր :

ՄԵՑ. Ատոնք մեծ բան չեն սեպուիր , թէոր նոյնչափ բանի համար քեզի ալ աչք կը գոցէր : Կերզնում որ այս պայմանաւ ես ալ յօժարութեամբ նշանաուքի մասնին կը խրկէի քեզ :

ՄԱՐԹ. Է՛հ պարոնը կատակը կը սիրէ :

ՄԵՑ. (Մէկ.) Ժամանակ է քաշուելու . անանկ կին մ'է այս որ սատանան ալ կրնայ խօսքովը բռնել (Գահարէիէն) Սիրտը ի՞նչպէս է :

ԳՈՋ. Ի՞նչ ըսել կուզէ Պարոնը :

ՄԵՑ. Անմեղ , սիրուն տղեկ : (Բարձր) Ո՛ղջ մնացէ՛ք , Տիկնայք :

ԳՈՋ. Ողջամբ ե՛րբի :

ՄԱՐԹ. Խօսք մը միայն . . . վկայով կուզէի գիտնալ թէ ե՞րբ և ի՞նչպէս իմ սիրելի ամուսինս մեռաւ ու թաղուեցաւ . կը սիրեմ կարգաւորեալ գործ տեսնել . լրագրաց մէջ ալ մահուան ծանուցումը գէշ չէր ըլլար :

ՄԵՑ. Այո՛ , ազնիւ Տիկին . ամէն երկրի մէջ

երկու վկայի խօսքով մարդ կը կախեն . հետ ազնուական երիտասարդ մ'ունիմ՝ ընկերս . դատաւորին առջեւ կելլէ ան : Նախ ձեզի բերելու եմ :

ՄԱՐԹ. Բե՛ր , բե՛ր :

ՄԵՑ. Որիորդն ալ ներկայ գտնուի, ի՛նչ տղայ . շատ ճամբորդութիւն ըրած է , օրիորդաց հետ վարուելուն կերպը գիտէ :

ԳՈՋ. Ատանկ պարոնի մ'առջեւ ամէնպէս պիտի կարմրիմ :

ՄԵՑ. Եւ ո՛չ իսկ թագաւորի մ'առջեւ :

ՄԱՐԹ. Ազ պարտիզին մէջ կապուենք ձեզի :

ԳՈՋ. (Մտածելով դէպ ի պարտեղը քայած ժամանակ ծառայ , կը պարտեղի որ պղծելու կը կենայ .)

ՄԵՑ. Բայց անա բարեկամս կու՛գայ :

(Ծառայ կը մտնէ ծառայարանին խորէն .)

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ Ե ՅԱՌԻՍ

ՄԱՐԹ. Ի՛նչ շնորհքով տղայ . Գոհարինէին անծանօթ ըլլալու չէ . . . կը խօսակցին :

ԳՈՋ. (Ծառայ , հեռ յարաւ գալով) Կիմանամ որ Պարոնը ներողամտութեամբ կը վարուի հետս . և մինչեւ ինձի կը խոնարհի զիս շփոթելու համար : Ճանապարհորդները աջնչափ վարժ են գտածովնին գոհ ըլլալու : Գիտեմ որ իմ խեղճ խօսակցութիւնս այնչափ գիտուն մարդու մը ծաղրը կը շարժէ :

ՅԱ. Քու մէկ նայուածքդ , մէկ խօսքդ ամէն աշխարհային գիտութենէ շատ բան կըսէ : (Ձեռն հանքորէն .)

ԳՈՀ. Մընէ՛ր, ինչպէ՛ս կրնաս պահանել . . . այն-
չափ կոշտ ու ազեղ է : Ամէն տանը հողը վրաս է . և
մայրս ալ շատ բծախնդիր է : (Կանցնէն :)

ՄԱՐԹ. Դո՛ւք ալ , Պարո՛ն , միշտ ճամբորդու-
թեան կը պարտալիք :

ՄԵՑ. Աւա՛ղ , դործերնիս , պարտքերնիս աս է :
Բայց երկիր կայ՝ զոր շատ ցաւով կը թողու մարդ .
և սակայն միշտ նոյն տեղ մնալն անկարելի է :

ՄԱՐԹ. Ծաղիկ հասակի մէջ վազելն փոյթ չէ .
բայց ծաղիկը կը թոռմի և ամուրի միայնակ քաշկուտ-
ուիլ մինչեւ գերեզմանը շատ աղւոր բան՝ չէ՛ :

ՄԵՑ. Ես ալ ատոր խորհելով կը սարսափիմ :

ՄԱՐԹ. Աւրեմն աղնիւ Պարո՛ն , անոր մէկ ճարը
տե՛ս , քանի որ ժամանակը ձեռքդ է : (Կանցնէն :)

ՖԱ. Ո՛հ , ինչո՞ւ պարզութիւնն ու անմեղու-
թիւնը բնաւ իրենց նուիրական արժէքը չեն ճանչ-
նար . ինչո՞ւ . . . :

ԳՈՀ. Ո՛հ , վայրկենիկ մ'ինծի մտածէ՛ : Երկայն
ժամեր ունիմ ես քեզի մտածելու :

ՖԱ. Ի՛նչ մինակդ ես :

ԳՈՀ. Այո՛ , մեր տունը փոքր է . բայց ամէն
հող վրաս է , աղախին ալ չունինք : Մայրս ալ անանկ
խիստ է . . . ամէնէն չնչին բաներու համար ալ . . . Ձէ
թէ ինքզինքս նեղը գնելու կարօտ ենք . վասն զի
առաջ Ատուած , շատերէն աւելի հանդիստ ապրելու
միջոցն են ունինք : Հայրս աղւորիկ տնակ մը և այդ
գեղեցիկ պարտեզը ձգեց . կըբայրս դորական է . ու
պղտիկ քոյրս , աւա՛ղ մեռաւ . . . որչա՛փ արգունք
թափեցի այն սիրուն ազջկան վրայ :

ՖԱ. Հրեշտակ մ'է՛ր՝ եթէ քեզի կը նմաներ . . . :

ԳՈՀ. Ե՛ր գինքը կը խնամէի և զիս սրտանց կը
սիրէր , հօրս մահուընէն ետքը ծնած էր : Այն մի-
ջոցին մայրս այնչափ նիհարցաւ որ կարծեցինք թէ
պիտի մեռնի , սակայն կամեց կամեց վրայ եկաւ :
Ձէր կրնար տղան զիեցնել ուստի կ'ս անոր կաթ ու
ջուր կը ջամբէի , իբր թէ դաւակը իմս ըլլար : Գըր-
կերուս մէջ կը գողգողար , կը ժպտէր ու կաճէր :

ՖԱ. Մաքուր երջանկութիւն մը չէի՞ր զգար այն
ատեն :

ԳՈՀ. Այո՛ , թէ լեղի ժամեր ալ կրային : Տղուն
որորոցը անկողնոյս մօտ էր , և ճիշ մ'արձակելուն
պէս կարթննայի . երբեմն մինչեւ առտու ծնկերուս
վրայ կորօրէի երգեր երգելով , և սակայն լոյսը ծա-
ղելուն հարկ էր անական դործոց զբաղիլ : Իրաւ աւ
մէն ատեն մարդ հանգիստ չէր . բայց կերակուրն ու
քունը աւելի համեղ կուգային : (Կանցնէն :)

ՄԱՐԹ. Խեղճ կանայք , կը չփոթին կը մնան :
ամուրի մը համոզելը սրչափ տաժանելի բան է :

ՄԵՑ. Քեզի պէս մէկը միայն կրնար զիս ճամբու-
բերիլ :

ՄԱՐԹ. Շիտակ խօսէ՛ , Պարո՛ն . դեռ բան մը
գտած չե՛ս . . . սիրտդ տեղ մը մնացած չէ՞ :

ՄԵՑ. Ի՛նչ կրտէ առածը : — «Ինքն իր գլխուն
անիկ մը , կնիկ մը , աս է՝ հոս տեղ երկինքը» : —

ՄԱՐԹ. Ըսել կուղեմ թէ մտքէդ բան մը անցած
չէ՞ :

ՄԵՑ. Ամէն տեղ ազէկ ընդունելութիւն գտած
եմ :

ՄԱՐԹ. Այսինքն ըսել կուղեմ թէ , սիրտդ բնաւ
բարբախտ չէ՞ :

ՄԵՖ. Ո՛չ, կանանց հետ կատակ ընելու չդար :
ՄԱՐԹ. Չկրցայ՞ միտքս հասկցնել :

ՄԵՖ. Որչա՛փ կը ցաւ իմ չհասկնալուս . — Շան
ներողամբա Ե՛ս : (Անցանէն :)

ՅԱ. Ուստի՞ զիս ճանչցար, հրեշտակիկ, ոտքս
պարտէզը դրածիս պէս :

ԳՈՆ. Չտեսա՞ր . աչքերս վար առի . . . :

ՅԱ. Եւ կը ներսն անցեալ օրուան համարձակու-
թեանս երբ եկեղեցիէն ելլելուդ . . . :

ԳՈՆ. Բոլորովին այլայլած էի, այդպիսի բան բը-
նաւ պատահած չէր ինծի, և մէկը մինչեւ հիմայ
բամբասանքի նիւթ դտած չէր վրաս : Ա՛հ, կըսէի
ինքնիրենս, վրադ համարձակ և անվայել բան մը
տեսած ըլլալու է այդ Պարոնը և կարծած է թէ ա-
նրկիւղ կրնայ խօսք նստել : Բայց կը խոստովանիմ.
սիրտս քեզի համար կը փաստաբանէր և կը նեղանայի
ինծի դէմ թէ ինչո՞ւ չկրցայ քեզի դէմ նեղանալ :

ՅԱ. Սիրո՛ւն հոգի :

ԳՈՆ. Քիչ մը թող զիս : (Նւրօր մը Ժողով է
Բղնաթի :)

ՅԱ. Ի՞նչ է ատ . փո՞ւնջ մը պիտի կապես :

ԳՈՆ. Չէ, խաղ մնէ :

ՅԱ. Ի՞նչ տեսակ :

ԳՈՆ. Չեմ ըսե՛ր, վրաս կը խնդաս : (Թղնաթիւղ
Բարեբէր կը մտնայ :)

ՅԱ. Ի՞նչ կը փախաս :

ԳՈՆ. (Եխառայն) կը սիրէ զիս . — չսիրէր :

ՅԱ. Ո՛հ, երկնքէն իջած սնուչ էակ :

ԳՈՆ. կը սիրէ զիս . . . ոչ . . . կը սիրէ զիս . . . ո՛չ,
(Վերջին Բերնէ Խնդր-Բեռնիք Էրցնելով) կը սիրէ զիս . . . :

ՅԱ. Այո՛, նազելիս . թո՛ղ այդ ծաղկին վկա-
յութիւնը քեզի համար երկնից պատգամ ըլլայ . կը
սիրէ գրեզ . — գիտե՞ս թէ ի՞նչ ըսել է ադ . . . կը
սիրէ՞ գրեզ : (Երկու յետք Բարեբէր :)

ԳՈՆ. կը գողամ :

ՅԱ. Ո՛հ, մի՛ գողար . թո՛ղ այս նայուածքը,
այս գրկախառնութիւնը զրուցն քեզի ի՛նչ որ ան-
բացատրելի է . . . խաղառ ինքզինքը տալ, արբենալ
հեշտութեամբ մը որ յաւիտենական ըլլայ պիտի . . .
յաւիտենականն, յաւիտենականն : Անոր վերջը յուսա-
հատութիւն կըլլայ : Ո՛չ, ո՛չ բնաւ վերջ . ո՛չ, բնաւ
վերջ : (Գ. Կ. յետք կը սգի և աղաթելով կը փախչի : Յարա-
գայիւն մը մտախորհ կը մնայ յետոյ անոր ետեւէն կերնայ :)

ՄԱՐԹ. (Գաւջ) Գիշեր կըլլայ :

ՄԵՖ. Այո՛, քաշուելու ենք :

ՄԱՐԹ. Կուզէի որ աւելի կենաս . բայց չար լե-
զաները ո՞վ կրնայ արգելուլ : Կարծես թէ հողերնին
հատեր ու միայն գրացիններուն ըրածներն ու ըսած-
ները կը լրտեսին, ի՛նչ ալ կեանք անցնես՝ բամբա-
սանքէ չես խալիւր . . . բայց մեր աղանեսակները :

ՄԵՖ. Ադ սիրուն թիթեռնիկները ծառերուն ե-
տին կը թռչտին կարծես :

ՄԱՐԹ. Բարեկամդ բռնկած կերելայ :

ՄԵՖ. Աղջիկն ալ . աշխարհ ասանկ կերթայ :

ԳՈՆ. (Յարկելով Զարե մը ետեւէն կը փախչի, կը
պահուրի՞ յետք Բերնէն զրայ դնելով ու մտաբան մե-
ջէն կը նայի) Ա՛հ :

ՅԱ. (Հանելով) Ա՛հ, չարա՛ճճի . ասանկ կը խա-
բես զիս, բռնեցի գրեզ : (կը քրիկ :)

ԳՈՆ. (Չինքն քրիկելով ու հարթուրելով) Ա՛նուչ սիրա-

զքեղ հոգևով չափ կը սիրեմ :

ՄԵՑ. (Գուշով) Զատուելու ժամն է :

ՖԱ. Ո՛հ , ի՞նչ շուտ կը հասնի : Օրհորդ , կըր-
նա՞մ քեզի ուղեկցել :

ԳՈՀ. Մայրս . . . զիս . . . Մնա՛ս բարով :

ՖԱ. Զքեղ թողուլ . . . բարևու երթ : (Զեռն է
քնօր իւր հոգիէն) :

ԳՈՀ. Ո՛վ Աստուած , ի՞նչ պիտի ըսէ արդեօք
իմ վրաս առ մարդը : Առջին շփոթած կը մնամ և
այո՛ էն դատ պատասխան չեմ կրնար տալ : Խեղճ ու
տգէտ աղջիկ մ'եմ ու չեմ գիտեր ի՞նչ կը գտնէ վը-
րաս : (Ելնէն) :

ՖԱ. (Առանչն) Ողբ՛դ վեհ՛ ամէն բան տուիր
ինձ . ամէն՛ ի՞նչ որ կը խնդրէի . ոչ ի դուր առ իս
գարծուցիր քու գէժքդ բոցերուն մէջէն : Գու ինձ
իբր թագաւորութիւն տուիր հզօր բնութիւնը զայն
զգալու ու վայելելու ոյժն ալ : Գոհ չեղար պող գար-
մանը մ'ազգեկով ինձ այդ կուսին նայուածքներուն մէ-
ջէն . բայց իր սիրտը բացիր ինձ և հոն հրեղէն խոր-
հուրդներ կը կարդամ : Գու իմ գիմնացս կը պարզես
կեանքը եւ անոր գաղտնիքները կը սորվեցնես լու-
սիստ թուփին օդոյն և ջուրց մէջէն : Եւ կը մըրը-
րիկը ճայթի ու անտառներուն մէջ գոռայ , հսկա-
յաղթ կնձնիկները թաւալելով կը անոնց անկումէն
արծազանքներ թնդան , դու զիս քարանձառներու
մէջ կառաջնորդես և հոն միայնութեան մէջ իմ սըը-
տիս վհերը կը բանաս ինձ :

Եւ յստակ լուսինը կը բարձրանայ մեզմ ճաճան-
չելով և պուրակներուն ու ձորերուն մէջէն ստուերա-
տիպ կը սողոսկին աչքէս տեսիլք անցելոյն , մեծու-

Ղոցիս՝ վաժարել կուզեմ : Ո՛հ , արդեօք ա՞ս է եր-
ջանկութիւնը :

ՊԱՏԿԵՐ Բ.

(Դաշտ մը ցեր և ցան ծառերով . խորը ջրհոր մը) :

ՏԵՍԻԼ Ա.

ԳՈՀԱՐԻՆԷ և ՖԱՌՈՍ

ԳՈՀ. Տարի մեկ որ զքեզ կը ճանչեմ , Եղուարդ
և քեզի համար ամէն բան մոռցած եմ . բայց կը բաղ-
ձայի որ Աստուծոյ օրհնութիւնը մեր սէրը սրբացնէ ,
խոտացիր ինձ , Եղուարդ :

ՖԱ. Ի՞նչ որ կընամ :

ԳՈՀ. Աղէկ .— ըսէ ինձ կրօնից հետ ինչպէս ես
բարի ազնիւ սիրտ մնես . բայց վախնամ հաւատքդ
խախտու է :

ՖԱ. Զգե՛նք ադ խօսքը , տղայ . կը տեսնես վը-
րադ ունեցած գորովս սիրելոյս համար պատրաստ
եմ արիւնս ու կեանքս տալու , մէկուն զգացմանցն
ու հաւատոց չեմ ուղեր դպչել :

ԳՈՀ. Ադ չբուէր , հաւատարու է :

ՖԱ. կը կարծես . . . :

ԳՈՀ. Ո՛հ , թէ որ վրադ աղչեցր թիւն ունենա-
յի .— Սուրբ խորհուրդներն ալ չե՞ս յարդեր :

ՖԱ. կը յարդեմ :

ԳՈՀ. Բայց անոնց չես բաղձար .— Որչափ ժա-

թեան հեշտութիւնը աւելցնելով : Երբեցեալ մարդու նման փափաքէն վայելքը կանցնիմ եւ վայելած միմանակ է աղօթքի չես կայնիր . կը հաւատաս Աստուծոյ :

ՅԱ. Քա՛ղցր սիրուհի , ո՞վ կը յանդգնի ըսել : «Եր հաւատամ » . — Հարցուր քահանայից եւ իմաստնոց , անոնց պատասխաններուն մէջն անդամ որոշ բան մը չկայ :

ԳՈՀ. Ուրեմն շե՞ս հաւատար :

ՅԱ. Սխալ մի հասկնար , շնորհալից դէմք . ո՞վ կարող է զինքն անուանել եւ ըսել . «Եր հաւատամ անոր » . Բայց ո՞ր զգայուն էակն ալ կրնայ յանդգնիլ ըսելու իրեն . «Ձեմ հաւատար» : Ինքը որ ամէն բան կը պարունակէ , ամէն բան կը վերըմբռնէ , չպարունակէ՞ր , չվերմբռնէ՞ր զքեզ ալ , զիս ալ , ինքզինքն ալ : Ոչ ապա՞քէն երկնից դմբէթը մեր վրայ կը տարածուի եւ երկիրը մեր ոտից ներքեւ . ո՞չ սիրահայեաց աստեղը մշտաբայ կը ժպտին մեզ , ո՞չ ապաքէն աչքս աչացդ մէջ կընկղմի ու բոլոր կեանքը , գէպ ի սիրտդ կը դիմէ . եւ մեր շուրջը ամէն բան ծածուկ եւ խորհուրդ չէ՞ մի : Լից ուրեմն սիրտդ զմայլանօք , անուանէ այդ զգայունքը ինչպէս կուզես . կըջանկութիւն , սիրտ , սէր , Աստուած . . . ես ատոր անուն մը չունիմ : Զգացմունքն է էականը , անունը մութ ու աղմուկ է , երկնային բոցը կը նսեմացնէ :

ԳՈՀ. Աղւոր կը խօսիս բայց քահանան նոյն բաները տարբեր կերպով կըսէ :

ՅԱ. Ամէն արարած իր սեպական լեզուով կանուանէ զինքն . թոյլ տուր ինձ ալ՝ անոնց օրինակին հետեւիմ :

ԳՈՀ. Չա՛ր , պիտի համոզե՛ս զիս : Բայց Քրիստոնեայ չես :

ՅԱ. Սիրո՞ւն հրեշտակ . . . :

ԳՈՀ. Արդէն շատոնց վշտացած եմ , քովդ աղմարդը տեսնելով :

ՅԱ. Ի՞նչ ըսել կուզես :

ԳՈՀ. Հետդ եղող անձը ատելի էինձ , իր տեսքը սարսափ կը պատճառէ :

ՅԱ. Մի՛ վախնար :

ԳՈՀ. Ամենուն հետը հեղ եմ , բայց իրմէ կ'ալքեմ : Որչափ կարօտ եմ քեւ սեսքիդ , այնչափ կը դարչիմ իրմէ : Աղէկ մարդ մը չերուար ինձ . . . Աստուած ներէ թէ որ կը սխալիմ :

ՅԱ. Այդպիսի թուշուներ ալ պէտք են բնութեան մէջ :

ԳՈՀ. Ատանկի հետ ապրիլ չէի ուզեր : Երբոր դրան առաջ կերեւայ՝ անանկ քրքչով եւ գրեթէ զայրացած կերպարանք մ'ունի . . . կարծես ճակտին վրայ դրուած է որ չկրնար սիրել : Որչափ հանգիստ ու ազատ եմ գրկացդ մէջ , բայց իւր ներկայութիւնը սիրտս կը սեղմէ :

ՅԱ. Նախազգացմամբ լցուած հրեշտակ . . . :

ԳՈՀ. Այնչափ կազդէ վրաս , որ քովս եղած ժամանակ կարծես ալ զքեզ չեմ սիրեր . աղօթք կը սառնի չրթանցս վրայ , սիրտս կը կեղեքեն : Այսպէս չըլա՞ր քեզի ալ , Եգուարդ :

ՅԱ. Հակակրութիւն է այդ :

ԳՈՀ. Թերեւս քեզ ձգելու եմ :

ՅԱ. Ա՛հ , ժամ մը հանգիստ պիտի չկարենամ վայելիլ քովդ , սիրտս սրտիդ եւ հոգիս հոգւոյդ խառնած :

ԳՈՋ. Եթէ մինակս ըլլայի , թերեւս յօժարու-
թեամբ նիզերը բաց ձգէի այս իրիկուն քեզի համար ,
բայց մօրս քունը թեթեւ է , և եթէ տեսնէր զմեզ՝
հոն կը մեռնէի :

ՖԱ. Սիրո՛ւն հրեշտակ , հոգ մ'ընէր , ա՛ն այս
սրուակը , այս օչարակէն երեք կաթիլ կը բաւէ խո-
րին քուն մը տալու :

ԳՈՋ. Բան մը կա՞յ որ չընեմ քու սիրոյդ . կը
յուսամ որ միաս մը չեկեր :

ՖԱ. Կը կարծէի՞ր որ այդպիսի բան տամ քեզի :

ԳՈՋ. Երբ գքեզ կը տեսնեմ , զօրութիւն մը կայ
որ կը բռնադատէ զիս ուզելու ինչ որ դու կուզես ,
և արդէն այնչափ բան ըրի քեզի համար , որ ալ ընե-
լու բան մը չմնաց : (Եւրէ :)

ՏԵՍԻԼ Բ.

ՖԱՌԻՍ և ՄԵՖԻՍԹՈՅԵԼԷՍ

ՄԵՖ. Գառնուկը դնա՞ց :

ՖԱ. Նորէն լրտեսելու եկա՞ր :

ՄԵՖ. Գասը ինչպէ՞ս գտար : Աղջիկները կուզեն
որ մարդ բարեպաշտիկ ըլլայ : Մէկ կէտի վրայ անոնց
յաղթենք նէ . կը խորհին . մնացածը բան մը ըսել չէ :

ՖԱ. Չե՞ս տեսներ , հրէչ , թէ որչափ անկեղծ է
այն հաւատարիմ հոգին , և ինքը՝ որ հաւատովք կեր-
ջանկանայ , կը ցաւի իր սիրելոյն կորստեանը վրայ :

ՄԵՖ. Չգայուն և անմի՛տ սիրական , աղջիկը
քթէդ բռնեց :

ՖԱ. Այլանդակ կո՛յտ տղմի և կրակի :

ՄԵՖ. (Մէկ) Երբ միտակեղ եմք ինչ սարսուռ
կզգայ . . . կիմանայ կարծես որ ողբ մը կայ մէջս . . .
(Բարձր) Բայց ասոնք թողունք . է՛ն . . . այս դիչեր . . . :

ՖԱ. Ինչ փոյթ քեզի . . . գնա՛ տիեզերաց մէջ
թափառէ ու թող զիս :

ՄԵՖ. Իրա՛ւ է . գործի մը մէջ սէրը մոռնելէն
վերջը , սատանան ա՛լ աւելորդ է : (Երբան :

ՏԵՍԻԼ Բ.

ՋՐՀՈՐԻՆ ՔՈՎ

ԳՈՋԱՐԻՆԷ և ՄԱՐԻՈՆ

(Ստեփանեռով)

ՄԱՐԻ. Պատի վարդուհետն վրայ ըսուածը լսե-
ցի՞ր :

ԳՈՋ. Չլսեցի . . . մարդու հետ չեմ տեսնուիր :

ՄԱՐԻ. Դո՛ւ ալ : Զարուհին ինձի ըսաւ այսօր .
ան ալ լմնցաւ , ան ալ խաբուեր է . . . : Հապա , այդ-
չափ սղորանքներուն վերջն ի՞նչ պիտի ըլլար :

ԳՈՋ. Ի՞նչպէս :

ՄԱՐԻ. Սարսափելի բան , քոյրս . հիմայ երբոր
կուտէ և կը խմէ երկու հողոյ համար կուտէ ու կը
խմէ . երկու հողի կը սնուցանէ :

ԳՈՋ. Ա՛հ :

ՄԱՐԻ. Ըրածը գտաւ , որչա՛փ ժամանակ ան
խնդրին կտին ինկաւ : Երջագայութիւն կըսես , պա-
րահանդէս գիւղագնացութիւն ամէն տեղ անաղջին ըլ-
լալ կուզէր : Երիտասարդը անոր ամէն տեսակ ընծաներ
կը հասցնէր , միտքն ալ գրած էր որ աշխարհիս վրայ
գեղեցիկ ինքն է . ի՞նչպէս ալ առանց ամչնալու ըն-

ծաները կընդունէր : Առաջ կատակով մը ստեղծուաւ , ետքը գգուանք մը . . . վե՛րջը , վե՛րջը ծաղիկը թռուփեցաւ :

ԳՈՋ. Խեղճ աղջիկ . . . :

ՄԱՐԻ. Ի՞նչ . կը ցաւի՞ս . երբոր իրիկուան մննք նստած ձախրին առջեւ կը մանէինք ու մայրերնիս թոյլ չէր տար որ վար իջնէք , անիկայ սիրականին հետ թեւ թեւի ո՛ւր տեղուանք կը պտտէր , ժամանակը իրեն ամենեւին երկայն չէր գար . թոյլ քիչ մը կտարի քիթը . վիզը չուան անցուցած գիւղին մէջ պիտի պտտի :

ԳՈՋ. Տարակոյս չունիմ որ երխտասարդը հետը կամուսնանայ :

ՄԱՐԻ. Խենդ ըլլալու էր : Անանկ աշխոյժ տղայ մը՝ ո՛ր ծառէն ալ ըլլայ կրնայ պտուղ մը փրցնել : Անիկայ առաւ քալեց :

ԳՈՋ. Աղէկ չէ՛ ըրեր :


ՄԱՐԻ. Թո՛ղ աղջիկը ետեւէն երթայ գոնէ : Ա՛հ , քո՛յր . մարդ ըրածը կը գտնէ :

ԳՈՋ. (Պարտաշին պարկէրէն ծոռեմարմ) Ի՛նչ համար . ձակ կը խօսէի ժամանակաւ աղջկան մը վրայ , երբոր կը սխալէր . . . Ուրիշներու մեղքին վրայ լեզուս որչա՛փ երկայն էր . . . աչքիս որչա՛փ ալ սեւ երեւնային՝ բաւական չէի կարծեր ու աւելի կը սեւցնէի . . . Իսկ ե՛ս հիմայ միայն մեղք եմ . . . և սակայն դիս այդ վիճը նկատը . Աստուած ի՛մ . ի՛նչ ազնիւ , ի՛նչ պաշտելի էակ մ'էր . . . (Ծոռիկներ ժողովեալ պարկէրէն որդը կը քնէ :)



ՄԱՍՆ Գ.

ՊԱՏՈՒՀԱՍ ԵՒ ՎԱՐՁՔ



ՊԱՏԿԵՐ Ա.

(Հրապարակ մը , մէկ կողմէն եկեղեցւոյ մը դուռը կը տեսնուի սանդղակը . միւսէն շարք մը տներ լուսնի լոյս)

ՏԵՍԻՒ Ա.

ՎԱԼԱՆԴԻՆ և ԶՕՐԱԿԱՆ ՄԸ

ԶՕՐ. Վալանդէ՛ն , բարեկա՛մ , ի՞նչ է այս , տրտում կ'երեւաս . այնչափ պատերազմներէ վերջը՝ փառք Աստուծոյ , ողջ առողջ դարձանք , դու ասանկ կախերես ընաւ եղած չէիր : Ահա՛ հասանք վերջապէս մեր գիւղը : Ա՛հ , Աստուած իմ , մայրս պիտի տեսնե՛մ հիմայ : Գիտե՛ս , ի՛նչ պիտի ընեմ , Վալէ՛նդ , թէ որ քնացեր է՝ կամայ տուն պիտի մտնեմ միայն քրոջս խնայ տալով , պիտի պտուկիմ . մէյ մ'ալ մայրըս առտուն արթնցած ին պէս , Աստուած կենդանի ի՛նչ պիտի ըլլայ ուրախութեանէն . հասաք քո՛յրս . . . սանկ մէյմը երեսները պողնեմ . . . ա՛հ , աղէկ որ չմեռայ :

ՎԱԼ. Աղէ՞կ է չմեռել :

ԶՕՐ. Շատ բան չէր մնացեր , Վալէ՛նդ : միտքդ է որ գիշեր ատեն Բոմբէայի վրայ յարձակեցանք . թշուառական նկատերը և նիզակները ամենեւին կա-

տակ չեն հասկնար, վախցայ որ անոնց մէկը կ'ելլայ
—բարեկամութեան համար— սիրտս մտնէ : Ան
զիշերուան հրաշագործութիւններդ պիտի չմոռնամ
բնաւ , դո՛ւ առաջին գրոշը տնկեցիր պատնիշին վը-
րայ քրօջ գոհարին անուշը տալով :

ՎԱԼ. Գո՛րբ . . . :

ԶՕԲ. Գիշեր բարի , Վալէ՛նդ , սիրտս անհամ-
բեր է , երթամ տուն , վաղը տեսնուինք :

ՎԱԼ. Վաղը՝ ո՞վ գիտէ . —ամէն վայրկեան մէջ-
մէկ բացուած գերեզման է և մենք անոնց վրայ կը
քալենք . վաղը՝ . . . եկո՛ւ գրկուինք . . . (Լայ :)

ԶՕԲ. Կուլա՛ս , ա՛հ իմ բարեկամս , սիրտդ բա՛ց
ինձի :

ՎԱԼ. Ո՛հ , դնա , գնա , վաղը . . . կը լսե՛ս :

ԶՕԲ. Բարեաւ մնա՛ . (Կերէայ :)

ՎԱԽ. (Սահման) Երբոր պատերազմի դաշտին
վրայ , արիւնոտ կռուէ մ'ետքը , իրիկուան վառուած
խարոյկներուն չորս կողմը կը նստէինք և բարեկամ-
ներս գինուով գուարթացեալ կը գովէին սրտանց իւ-
րաքանչիւրն իր սիրունին և մէկ ձեռքով մօրուքնին
կը փայտէին և միւսով գինուոյ բաժակը կը կոծէին ,
ես անվախ ապահովութեամբ նստած անոնց բար-
բանջը մտիկ կընէի , յետոյ դաւաթ ի ձեռին ոտք ել-
լելով կընէի . «Ամէն մարդ իւր ճաշակն ունի . բայց
կը ճանչնա՞ք բնաւ մեր երկրին մէջ աղջիկ մը՝ որ
իմ սիրուն գոհարիկս արժէ կամ իր մուճակներուն
խրացքը քակելու արժանի ըլլայ . » Թօ՛նկ . Թօ՛նկ .
Քի՛կ . Քլա՛նք . բերնէ բերան խօսքը կը կրկնուէր :
Ոմանք կաղապակէին . « Իրաւունք ունի . Գոհարիկը
աղջկանց ցեղին պարծանքն է , » Եւ պարծենկոտները

կը պապանձէին : Իսկ հիմայ . . . մազերս խզելու և
գանկս աս պատերուն վրայ ջախջախելու եմ : Առա-
ջին սրիկան կրնայ զիս ծաղր ու ծանակ ընել սայրա-
սուր խօսքերով . . . հիմայ եղեռնագործի մը պէս տան-
ջանարանը կապուած ե ու ամէն խօսքին կարիւնո-
տիմ . . . և թէև ամէնուն յաղթեմ՝ սակայն չեմ
կրնար ստախօս կոչել զանոնք . . . : Տղայ մ'ունեցեր է . . .
ո՛վ դժոխք . . . Բայց ո՞վ է այդ ստուերայ մէջ սպըր-
դոզը . . . եթէ չեմ սխալիր երկու հողի են . . . թէ
որ ան սրիկան է՝ վրան կը յարձակիմ և , կենդանի՞
Տէ՛ր , ձեռքէս ողջ պիտի չսլորի . . . (Կը Ֆեյնստայն)

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆ , ՖԱՌԻՍ և ՄԵՖԻՍԹՈՅԵԼԷՍ

ՖԱ. Կը տեսնե՞ս հող եկեղեցւոյ լուսանցքներէն
առկայծեալ լապտերին լոյսը՝ որ կը զողորջէ և հե-
տըզհետէ տկարանալով շուրջ մթութիւն կը տարածի .
այսպէս հողուոյ մէջ կը տարածի գիշերը :

ՄԵՖ. Եկո՛ւր , ահա՛ սիրականիդ տունը :

ՖԱ. Թերեւս կը քնանայ ու զիս կերազէ :

ՄԵՖ. Թող տո՛ւր . պզտի երգ մը երգեմ . (Կե-
լաւով կերէէ :)

Եթէ լուսնի լուսոյն պէս
Հողիս թեւ ունենար ,
Շուշանափայլ ծոցիդ վրայ
Միայն պիտի շողար :
Թէ իմս ըլլար երկինքը ,

Յարդ կապուտակ կամար ,

Կը գրէի սաստերով

Զանուէն քոյին՝ Գոհար :

Թէ ազգերու տիրէի,

Առանց քեզ Գոհար

Կըսէի . «Տուր ժպիտ մը

Եւ այս ամէնն ալ ա՛ն» :

ՎԱԼ. (Յառաջ հարկ) Ի՞նչ կը մըմուտս հող . եր-
գուեալ ի գժոխս ... անիծեալ գիշերաշրջիկ . սատա-
նան առնէ գործիքը նախ և ետքը զքեզ : (Կիտարէ կը
խորհակէ) :

ՄԵՖ. Բանդեռնը երկու եղաւ , ալ բանի չգար :

ՎԱԼ. Հիմայ մէկգոմէկ փողոտելու ենք :

ՄԵՖ. (Առ Յառաջ) Օ՛ն , Տէր զիտնական , ետ
մի՛ քաշուիր , պատրաստուէ՛ և քովս կեցի՛ր որ ձեռ-
քըդ կառավարեմ : Օ՛ն անդր , սուսերք յայեր . . .
մղէ՛ . . . կը պահպանեմ :

ՎԱԼ. (Յառաջ հետ կը մեծամարտէ) Աս ալ արգիլէ :

ՄԵՖ. Ինչո՞ւ չէ :

ՎԱԼ. Հապա ատ :

ՄԵՖ. Անտարակոյս :

ՎԱԼ. Կուռողը սատանան ըլլալու է . ո՛հ Աս-
տուած . ձեռքս կը թմրի :

ՄԵՖ. Մղէ՛ :

ՎԱԼ. (Կիտարէ) Վա՛հ զիս :

ՄԵՖ. Գասը մոռնալիք չունի : Հիմայ առաջատ-
ները բանանք . . . հիմակուան փաստաբաններուն
հետ գլուխ չեմ ելլեր . . . զիս ալ կը շփոթեն :

ՖԱ. Ո՛հ , փախչի՛նք . . . արիւնը կաղաղակէ ,
կը ծովանայ . . . կընկղմէ զիս . . . :

ՄԵՖ. Առաջին արիւնը . . . աղէկ սկսա՛նք :
(Կը փոխէ) :

ՄԱՐԹ. (Պարտահանէ) Օգնու թի՛ւն . . . օգնու-
թի՛ւն . . . :

ԳՈՀ. (Պարտահանէ) Լոյս մը , ճրագ մը :

ՄԱՐԹ. Կոխ . աղմուկ կայ :

ԺՈՂՈՎՈՒՐԳ. Մէկը սպաննուեր է :

ՄԱՐԹ. (Իջա՞) Մարդասպանները փախան :

ԳՈՀ. (Իջա՞) Ո՞վ ինկեր է հող :

ԺՈՂ. Մօրդ տղան :

ԳՈՀ. Աստուած ամենակալ . ի՛նչ թշուառու-
թիւն :

ՎԱԼ. Կը մեռնիմ . . . խօսքը կարծ է գործը աւելի
կարծ : Գո՛ւք՝ կանա՛յք՝ ի՛նչ կեցեր էք հող . . . ի՛նչ
են այդ աղաղակներն ու վայնատունը . . . հոս եկո՛ւր
ու լսէ : (Շարժէ քուրսէն ափէն) Նայէ՛ , Գոհա՛ր , դեռ
տղայ ես և վարպետութիւն չունիս . գործ տեսնել
չե՛ս զիտեր . . . մտերմաբար կըսեմ քեզի , փողոցի
կիւն մեծս . վայլածին պէս եղի՛ր :

ԳՈՀ. Եղբա՛յր իմ . . . Աստուած իմ . . . ա՛հ
ի՛նչ կըլլամ :

ՎԱԼ. Սա գործերուն մէջ զԱստուած ալ մի՛
խառնիր : Գժբաղգաբար եղածն եղած է և ըլլալիքն
ալ պիտի ըլլայ : Գաղտուկ սկսար մէկու մը հետ ,
միւսները կամաց կամաց կուգան . և երբ տասնի մը
չափ ունենաս՝ բոլոր քաղաքին ստացուածքը կըլլաս :
Մարդ առջի բերան նախատինքը խորհրդով կսքոյէ .
գիշերուան մթութեամբ կը վարագուրէ , ձեռքէն գար
կը խեղդէր ալ . բայց ան կածի ու կը մծնայ և մեկը-
կանգամ կարձանանայ արիւտն զէ՛մ և անով ալ չգե-

ղեցկանար իր պժգալի կերպարանքը : Կը տեսնեմ ար-
դէն այն ժամանակը՝ ուր պարկեշտ մարդիկ, ո՛վ լիտի,
զգուանօք առջեւէդ պիտի փախչին՝ իբրեւ դարչա-
հոտ դիակէ մը . և թէոր մէկը աչքիդ մէջ նայի , ա-
մօթը մինչեւ ոսկնրացդ մէջ պիտի մտնէ : Այն ատեն
ոսկի շղթայ պիտի չունենան . տեղ պիտի չտան քե-
զի եկեղեցւոյն մէջ , բեհեզեայ պատմութեաննորով
պիտի չերեւաւ պարանանդէսները . դեանաբեկ խըշ-
տիւր մը վրայ , հաշմերուն ու արտածէսներուն քով
պիտի երթաս փռուիս . և թէեւ Աստուած ներէ քե-
զի՝ մարդիկ երկրիս վրայ գընդ պիտի անիծեն . . . :

ՄԱՐԹ. Հողիդ Աստուծոյ յանձնէ . . . նոր մե՞ղք
մ'ալ կուզես աւելցնել խղճիդ վրայ :

ՎԱԼ. Ա՛հ . թէոր կարենայի յարձակիլ այդ կոշտ
մարմնոյդ վրայ , պժգալի կաւատ . կը յուսայի անով
բոլոր մեղքերու քաւութիւն ընդունիլ :

ԳՈՀ. Ա՛հ , եղբայր , ի՞նչ դժոխային տանջանք :

ՎԱԼ. Ըսի քեզի . հիմայ արցունքն աւելորդ է :
Այն վայրկենին մահաբեր հարուածն իջեցուցիր ինձ՝
երբ պատիւդ ոտքի տակ կոխեցիր : Ես մահուան քնոյ
մէջէն առ Աստուած կերթամ՝ իբրեւ դիմուոր և
իբրեւ քաջ : (Մեռանի :)

(Եկեղեցւոյն զանգակները մահուան ֆանֆանը կը հնչեցնեն)

ՄԱՐԹ. Մօրդ համար է :

ԳՈՀ. Ո՛հ . . . երկո՛ւքն ալ :

ԺՈՂ. Եւ եղբօրդ :

(Ժողովարարը եկեղեցին կը մտնէ . խռանկ , կնամոնան և
զմոռան . վալանքէնը կը սանին . Գոհար դրան առջեւ է
ծաւնը կիջնայ . շար ոքին (Մեք.) Գոհարի ետին է :)

ԳՈՀ. Ո՛վ բնակարան երկնային անդորրու՝ մըտ-

նե՛մ ի քեզ և սխեներուդ հովանոյն տակ՝ եղբօրս ա-
րիւնլուայ մարմնոյն քով իմ արիւնլուայ հողիս նե-
րումն պաղատի . . . :

ԶԱՐ ՈԳԻՆ. Ո՛չ , պիտի չմտնես այդ սրբավայրը :
ԳՈՀ. Աստուած իմ . . . ի՞նչ սարսուռ . . . :

ԶԱՐ ՈԳԻՆ

Ո՛վ Գոհար . ի՞նչ տարբերութիւն .
Ժամանակաւ անմեղ սրտով
Խորանին ոտքը կիյնայիր . . .
Այդ աղօթից մատենին մէջ՝
Որ պղծուած է այսօր՝
Մանուկ մատաղ կը թոթովէիր
Սուրբ աղօթք մը գողողջուն ճայնով .
Խաղք մանկութեան և Աստուած
Միանգամայն սրտիդ մէջ ամփոփուած :

Ո՛վ Գոհար .

Սիրտդ ու միտքդ ո՛ւր են արդ
Որչա՛փ ոճիրք . . . ի՞նչ աղէտքներ . . .
Միթէ կուզա՞ս հոս մօրդ համար աղօթիկ
Որ եղևանցդ ցաւէն
Արտատուելով շիրիմն իջաւ :
Ո՛ւ՛մ է արիւնն այն տանդ առջեւ . . .
Եւ ծոցիդ մէջ չե՞ս զգար
Նորակենդան էակ մ'ալ
Որ կը յուզուի և կերերայ , եղո՛ւկ ,
Եւ կը թռովէ գընդ . . . սիրո՞յ է ադ ձայնը թէ
խղճի . . .

ԳՈՀ. Վա՛հ , վա՛հ իցիւ թէ աղատէի
Այն անաւոր մտածութիւններէն
Որ չորս կողմէս կը հովաթեւեն

ՏԱՃԱՐԻՆՆԻ (Երբէհն) Դոնչեն շեկորք հրեշ-

տակային

ի պետութիւնս գերեզմանին .

Ժողովն զամէնք հանդէպ զանին :

ԶԱՐ ՈԳԻՆՆԻ

Վրադ կը տեղայ երկնից զայրոյթը ,

Փողերը կը գոչեն ,

Շիրիմք կը դողան ,

Եւ հիմայ սիրտդ արթննալով

իւր մահագոյծ թմբութենէն ,

Դժոխսոց դատապարտեալ . . կը սարսուի :

ԳՈՃ . Ո՛հ , թէ ասկէ հեռու ըլլայի .

Այդ երգեհոնը զիս կը խղզէ . . կը ճմլէ . .

Այդ երգը սիրտս կը փշրէ :

Իր խորունկ վանդիւհններով :

ՏԱՃ . Ո՛վ դու արքայդ անեղագօր ,

Որ կը փրկես ձրխաշնոր ,

Փրկէ զիս յօրն այն անաւոր :

ԳՈՃ . Կը խղզին զիս . . .

Երկաթեայ շրջանակի մէջ եմ

Կամամը վրաս կիջնայ

Կը ճղմէ՛ շողիս . . . օ՛դ օ՛դ :

ԶԱՐ ՈԳ . Ծածկուէ՛ . մեղքը , ամօթը , պըղ-

ծութիւնը

Ձեն կրնար սեւ քօղով մը վարագուրուիլ

Լոյս կուզես , օ՛դ կուզես .

Երո՛ւկ քեզ . .

ՏԱՃ . կը պաղատիմ քեզ ձեռնամած

Սիրտս առ վշտին մոխիր դարձած .

Մահուան ժամուս լի՛ր ինձ զթած :

ԶԱՐ ՈԳ . Ընտրեալը

Երեւնին կը դարձնեն քեզմէ

Եւ արդարը անցած ժամանակ

Ձեռք չկարկառեր քեզ . .

Վա՛յ քեզ . ոչի դատապարտեալ :

ԳՈՃ . Ո՛վ է ո՛վ . որ կը խօսի ինձ :

ԶԱՐ ՈԳ . Գու խիղճդ :

ՏԱՃ . Թշուառ զիս . . . ի՞նչ պիտի ըսեմ

Ձո՛վ բարեխօս ինձի կոչեմ

Երբ դարդարն իսկ վախցած տեսնեմ

ԳՈՃ . Ա՛հ . դրացիս՝ սրճակդ . . կը մարիմ . . . :

ՊԱՏԿԵՐ Բ.

(Սեւաղարք սրահ մը խորը բաց կը նշմարուի գեղեցիկ պարտէզ մը և լեռներ որոնց ստորտը կերեւայ իսկ գլուխը ամպերով ծածկուած է :)

ՏԵՍԻԼ Ա.

ՎԱԿՆԷՐ , ԲԱՐԱԿ

ԲԱՐ . Ի՛նչ ուրախ եմ , Տէր Վակնէր :

ՎԱԿ . Իրա՞ն . . . ինչո՞ւ՛ տղայ :

ԲԱՐ . Նախ՝ անոր համար որ նորէն երիտասարդացայ՝ որով կարելի կըլլայ ինձ այս խաղական երկնից հեշտութիւնը վայելի :

ՎԱԿ . Հա՛ , կը հասկնամ :

ԲԱՐ . Ասոր խօսք չկայ . նորէն մանկացոնք :

ՎԱԿ. Առաջուան պէս սիրուն ու մատող ենք :

ԲԱՐ. Բայց ադ հրաշքը ո՞վ գործեց :

ՎԱԿ. Ո՞վ, ես :

ԲԱՐ. Դո՞ւ :

ՎԱԿ. (Արհաճարհած) Վհուկին օգնութեամբը
ասոնք բարձր գիտութեան գաղտնիքներ են՝ որոց
արժէքը չես կրնար ճանչնալ :

ԲԱՐ. Ա՛հ :

ՎԱԿ. Պարկեշտ վհուկը՝ տէր Ֆաուստայ և իմ
աղաչանօքս յանձն առաւ կատարելու այն ապուշ-
ներուն խնդիրը՝ որ ամէն վայրկեան բերաննին այս
խօսքս միտցն ունին . « Ա՛հ մէյով վաղը ըլլար . . .
Ա՛հ . ամապլուէը համեք . . . Ա՛հ . աս տարի ալ
անցնէք . . . » Եւ իւրաքանչիւրին խօսքը լսելով մէյ-
մէկ օր , մէյմէկ ամիս , մէյմէկ տարի կաւեցնէր
անոնց :

ԲԱՐ. Եւ այդ ժամանակները իմ և քու վրայէդ
առնե՞լով տուաւ :

ՎԱԿ. Թէոր ամենուն ըսածն ալ կատարէր , դա-
յեակի պիտի կարօտ ըլլայինք :

ԲԱՐ. Ժամանակին կեցեր է . . ասանկ շատ ա-
ղէկ եմ .

ՎԱԿ. Ես ալ :

ԲԱՐ. Վերջապէս սա անուշիկ խտալիոյ մէջ ենք :

ՎԱԿ. Շատոնց սա գեղեցիկ երկիրը տեսնելու
կարօտցած էի և գերբն նոյն փախաքը յայտնած ըլ-
լալով . . . :

ԲԱՐ. Ո՞վ :

ՎԱԿ. Գերիս :

ԲԱՐ. Հա՛ :

ՎԱԿ. Ելանք , եկանք :

ԲԱՐ. Շատ հնազանդ , շատ հլու է այդ գերիդ :

ՎԱԿ. Այդպէս չէ՞ :

ԲԱՐ. Բան մ'ընեմ , Տէր Վակնէր . կարծեմ մեզ
խաբեցին :

ՎԱԿ. Ո՞վ :

ԲԱՐ. Այդ գառնուկ ծախողը :

ՎԱԿ. Ո՞ր գառնուկ ծախողը :

ԲԱՐ. Բաղադրութեան մէջ ամբողջ գառնուկ մը
դրինկ . . . բայց կարծիմ ատիկայ վայրենի կատու
մներ :

ՎԱԿ. Վայրենի կատու՛ւ , ի՞նչ կրեսս՝ Մարդու-
կը կը պաշտեմ :

ԲԱՐ. Մարդ ո՞ր ըլլածը չը պաշտէր :

ՎԱԿ. Թողունք այդ խօսքերը , նայինք ի՞նչ
պիտմ ընենք հոս :

ԲԱՐ. Մեր ընկիւքը յայտնի է . Տէր Ֆաուստայ
քով չմնալու համար վառն զի ալ աշակերտ մնալու
պէտք մը չունէիր . ելանք հոս եկանք : Բայց չգիտեմ,
ի՞նչ պատճառաւ Ֆաուստ և իր բարեկամն ալ հոս
եկեր են :

ՎԱԿ. Եւ Ֆաուստ . . . բայց լուէ՛ :

ԲԱՐ. Ա՛հ , գաղտնիք մը կայ :

ՎԱԿ. Սարսափելի . . . բայց լեղուդ բռնելու ետ :

ԲԱՐ. Ի՞նչ է , ի՞նչ գաղտնիք :

ՎԱԿ. Ֆաուստ Օլիմբիոյ հետ սիրահարուած է . .
անոր համար ամէն խնդութիւն կրնէ :

ԲԱՐ. Անո՞ր համար այնչափ գինույծախք կրնենք

ՎԱԿ. Լուէ՛ , մարդ չլուէ . . , հիմայ դու գնա՛

Մարդուկը կանչէ , կարծեմ քովի սենեակն է ,

ԲՈՐ. Լա՛ւ . . . բայց . . . զիտես . . . :

ՎԱԿ. Գնա՛ ըսի (Բարակ կերևոյ) իրաւ եթէ Մարգրուկը իմ ձեռակերտս չըլլար . . . բայց ի՞նչ ձայն է աղ : (Ներսէն քե՛ն յայն :)

ԲԱՐ. (Ներսէն) Եկո՛ւր կըսեմ :

ՄԱՐԳ. (Ներսէն) Կորի՛ր անայտան :

ՎԱԿ. Ի՞նչ կայ հող , ի՞նչ կայ :

ԲԱՐ. (Ներսէն) Չգար :

ՎԱԿ. Դուն եկո՛ւր :

ԲԱՐ. Չձգեր :

ՄԱՐԳ. (Գուլ) Ի՞նչ կուզես , ահա եկայ :

ԲԱՐ. (Գուլ) Վերջապէս բերի :

ՎԱԿ. Վերջապէս (Խոսէ) Քեզի չըսի՞ որ հաս սպասես :

ՄԱՐԳ. Ըսիր , բայց ես ուզեցի ելլել :

ՎԱԿ. Ա . . . :

ԲԱՐ. Կրթուեցաւ քիչ մը :

ՎԱԿ. Ուզեցի՛ր ըսիր :

ՄԱՐԳ. Ելլել :

ՎԱԿ. Աղէկ ես ըրեր . ես ալ քեզ դուրս խրկելու միտք ունէի . . . : Տեսա՞ր ինչպէս կրթեցի . . . Չէ՛ թէ միայն հրամաններս ալ գիտաւորութիւններս անգամ կը կատարէ :

ԲԱՐ. Ազու՛ր բան . աղւ՛սր :

ՎԱԿ. Ո՛ւր գացիր . պզտիկ :

ՄԱՐԳ. Ուզած անգս :

ՎԱԿ. Ես ալ ճիշդ հոն կուզէի խրկել զքեզ :

ԲԱՐ. Իրաւ որ աղէկ յարմարեր է :

ՎԱԿ. Հիմայ քովս մնաս պիտի , չէ՛ :

ՄԱՐԳ. Չէ՛ :

ՎԱԿ. Ա՛հ , դարձեալ՞ դուրս պիտի ելլես :

ՄԱՐԳ. Այո՛ :

ՎԱԿ. Ե՞րբ պիտի դառնաս :

ՄԱՐԳ. Երբ որ ուզեմ :

ՎԱԿ. Լաւ՛ . բայց գոնէ անկէ ուշ մի՛ գար , թէ չէ կը նեղանամ : (Մարգարէն կուսկը կը Գարնէ) Կը տեսնե՞ս ինչ իշխանական կերպով կը խօսիմ : Այս ձամբան միայն կը քակէ :

ԲԱՐ. Աղէկ կընես . տես՛ս ինչպէս կը հնազանդի :

ՄԱՐԳ. Տէր Ֆառուսայ հրամանները կատարեցի՞ք :

ԲԱՐ. Այո՛ , կատ . . . :

ՄԱՐԳ. Լաւ՛ :

ԲԱՐ. Ներեցէ՛ք , բայց . . . :

ՄԱՐԳ. Կամքս աս է :

ԲԱՐ. Ինծի նայեցէ՛ք կաղաչեմ , ես ձեր տէրը չեմ որ ինծի ալ հրամայէք :

ՎԱԿ. Ինչե՛ր կըսես , Բարա՛կ . Մարգարէն ըսաւ , ձայն հանելու չէ . իմ հրամաններս է որ քեզի կուտայ :

ՄԱՐԳ. Աս սրահիս մէջ ամէն բան թող պատրաստ ըլլայ . հիմայ Ֆառուսայ պիտի գայ իր բարեկամներովը :

ԲԱՐ. (Մեկուսի) Մեր փելիտոփան փախուց :

ՎԱԿ. Կարծեմ այս տեղ բաւական ճոխութիւն կայ իւր և բարեկամացն աչքերը չլացնելու համար :

ԲԱՐ. (Վախեալ , կիզեմ) Կաղաչեմ գաղտնիք մը կայ :

ՎԱԿ. Ըսէ՛ :

ԲԱՐ. Հոս եկած աղջիկներէն մէկուն քանի մը բառ ալ ես փախում , նայինք բան կրնամ՞ որսալ :

ՎԱԿ. Լուէ՛, կը համարձակի՞ս . . . :

ԲԱՐ. Իրենք կուտան կը խմեն . . . մենք վըշ-
րանք մը որ ժողվելու ըլլանք՝ աչքերնին վրանիս է :

ՏԵՍԻԼ Գ.

ՖԱՌԻՍՏ, ՈԼԻՄՊԻՍ, ՀԱՐՍՈՒՆԲ, ՄԵՖԻՍՅՈՑԵԼ.

ՖԱ. (Ծագիւոյ) Ոլիմպիա՛, երես նայէ՛, ըսէ՛ ,
կը սիրե՞ս զիս ,

ՈԼԻՄ. Կուղե՞ս ուրիմն որ կրկնեմ :

ՖԱ. Յանհունս կրկնէ՛, ա՛ն , ձանձրածա՞ր ինձ-
մէ . . . ըսէ՛, ի՞նչ կը խնդրես :

ՈԼԻՄ. Զիս այսպէս երեսի վրայ կը ձգես . գո-
հարէ մանեակ մը խոտացար :

ՖԱ. Ա՛ն . աղամանդներու վրայ կոխէ՛ ու քալէ՛,
թեւերս քեզի սիրահիւս մանեակ մ'ըլլան : Հոս եկու՛ր
Մեֆիսթոֆէլ . հոս փորէ՛, խուզարկէ՛ երկրիս ձոցը և
ինչ՛ անգին գոհարներ որ ծածկած է երկիրս , դուրս
հանէ՛ ու տո՛ւր իմ սիրուհւոյս :

ՄԵՖ. (Մէկ.) Իրաւ խնդերը յիմարանոցի մէջ բըն-
տուելու չէ . սիրահար մը լսելը բաւական է : Եթէ
գիտնան որ իրենց սիրուհւոյն հաճոյ պիտի ըլլան , հը-
րախաղացութեամբ մը՝ արեւը , լուսինն ու աստղերը
միանգամայն կը բռնկցընեն :

ՈԼԻՄ. Քեզի շատ վշտացած եմ :

ՖԱ. Ինչո՞ւ , նազե՛ լիս :

ՈԼԻՄ. Երկու ժամ ինձմէ հեռու կեցար այսօր :

ՖԱ. Բայց հոգիս վայրկեան մը չհեռացաւ քեզ-
մէ . . . ա՛ն , ներէ՛, սիրո՞ղ հոգի :

ՈԼԻՄ. Գիտե՞ս , Եղուարդ , Վարինք իշխանին
աղջիկը՝ երկձի կառքով պատկուտ կելլէ , ամէն կող-
մէ՝ իսկհնուուն մանկլաւիկներով . կակ ես՝ դեռ մէկ
ձիով կառք ունիմ :

ՖԱ. Հրաման ըրէ՛ և ո՛ր կառքը , ի՛նչ ձիեր ,
ո՛ր սպասաւորները կը բազձաս՝ ամէնը տամ քեզի :

ԲԱՐ. Տէ՛ր իմ, ես իրեն սպասաւոր կըլլամ (Մէկ.)
Ա՛ն ընդունէ՛ր զիս . . . :

ՈԼԻՄ. (Կը +բռնէ) Դո՞ւն :

ԲԱՐ. Զհաւնեցա՞ւ արդեօք : (Կը +աշուի :)

ՖԱ. Ի՛նչ զօրութիւնս, ի՛նչ մագնիս կայ վրադ
որ զիս կը քաշէ . կը նայիմ և չեմ յագնար . . . կը
սիրեմ, կը գգուեմ և դեռ կայրիմ . . . ո՛ն , քեզմէ
առաջ ամենեւին սէր չէի գգացած . հոս էր կեանքը,
հոս էր երջանկութիւնը . . . :

ՈԼԻՄ. Ա՛ն , Է՛ղուկ ինձ եթէ մատնե՛ս իմ հոգիս
որ վրադ վտանացած՝ իբրեւ մատաղ կոկոն մը քու
սիրոյդ շնչով բացուեցաւ :

ՖԱ. Ո՛վ անդուժ տարակոյս՝ որ սիրտդ կը կե-
ղեքէ . այնչափ նուա՞տ կը կարծես զիս :

ՈԼԻՄ. Մարդիկ փոփոխամիտ են :

ՖԱ. Բայց սէրը հաստատուն և անփոփոխ է : Թող
հնչեն երաժիշտք , հոսին զինիները . . . զուարթու-
թիւն , և երկինք դառնայ այս դրախտը . . . բայց
դու արդէն հրեշտակ չե՞ս . և երկինք չե՞ն այն տե-
ղուանք՝ ուր հրեշտակք իրենց թեւերը կը բանան :

(Պար , Նուսք + , Գիներբուստ :)

(Սոսիերու՝ միջոց լստիցանց կը խօսի Յատաս և Ժայ-
բայել զուարթացած է :)

ՎԱԿ. Բարա՛կ , եկո՛ւր հեռանամք :

ԲԱՐ. Ինչո՞ւ, տէ՛ր խո՛, ի՛նչ համով տեղ է հոս :
 ՎԱԿ. Եկո՛ւր, դու չես հասկնար և կրնաս դայ-
 թակղիլ: (Բարեւ Քրիստոսի քերական Վանկերայ երեւելի կեր-
 թայ :) Ա՛հ մեծ գիտնականք, ձեր խենդութիւնք ալ
 որչա՛փ մեծ են :

ՖԱ. Լի՛ց բաժակ մ'ալ՝ և սիրոյ նուիրեմք :
 ՈՒԻՄ. Մէկտեղ . . . քու խմածդ ալ զիս կար-
 բեցնէ :

ՖԱ. (Բաժակ մը կը ծախուցանէ լեցնելու համար)
 Լի՛ց և լսէ՛ .

Լի՛ց այդ բաժակդ, ո՛վ կոյս մատաղ,
 Լից և խմեմ խենդենամ,
 Բայց դու՛ խմէ՛ նախ, քու շրթունքդ
 Առնեն զբաժակ քաղցրահամ :

Խմէ՛ անվախ, մեզ լիկ վկայ
 Նարնջնիքն են ծաղկած,
 Եւ ջինջ վտակն որ գլտորի
 Զպատկեբդ ի ծոցն իւր պահած :

Երգէ՛՝ ո՛վ կոյս, նոր կկոցեալ
 Վարդէկոկոն շրթունքէդ,
 Ինչպէս զեփիւռ յայրած ծաղիկ,
 Սրախ իջնեն քու երգերդ :

Առ նախանձու լսեն սոխակք,
 Եւ յաստեղաց անդր ի ծոց՝
 Քեզ թեւասքոզ ունկն կախեն
 Հոյքը ըզմայլած զուարթնոց :

Մ'ամէնա՛ր, մի . ո՛վ կոյս, երգէ՛ .
 Ո՛չ այլ լսի ի բնութեան՝
 Բայց լոկ վարդեր որ կը բացուին՝
 Ու ողւոյդ տրոփիւնք սիրական :

Մէկդի՛ ձդէ քողդ, ո՛վ աղջիկ,
 Թող ինձ յենուլ ծոցիդ վրայ .

Այս տերեւոց կամարին տակ՝
 Մեզ լոկ լուսինն է վկայ :

Ո՛հ, մի՛ դողար, լոկ մի համբոյր
 Այդ ճակատուդ ըսպտակ .

Եւ գիրկընդխառն առնեն տանին
 Ըղմեղ կենացս այս կոհակք :

Ո՛հ, մի՛ դողար, վկայ են մեզ
 Լոկ մանիշակք ու յառմիկք

Որ զերդ սիրոյ երգ՝ կոյս յեթեր՝
 Բուբմունս հեղուն անուշիկ :

Հողւոյս հատոր՝ մտանցուր այտդ
 Իմ այտերուս կաթողին .

Թող տո՛ւր թեւերս ըլլան դօտի
 Այդ նազելի քո մէջքին :

Թող սրտերնիս իրերսխառն
 Գզուին սիրոյ երազօք .

Ամէն բարիք զիւրանց են՝ կոյս՝
 Յաւերժական՝ Սէրն է լոկ :

Քայց ո՛հ, խնայէ ինձ . . . ո՛հ, գլժա՛
 Ըսքօղէ գէմքդ երկնային . . .

Թէ ինքն Աստուած տեսնէր զմեզ
 Կը նախանձէր մեր բաղղին :

ՖԱ. (Յերբեւէ և որբեւէ կը բախանէ) Լցուցի՞ր այդ
 բաժակը :

ՈՒԻՄ. Զխմե՛ս . . . բայց ի՞նչ կըլլայ :
 ՄԵՑ. (Ներսէն) Հա՛, հա՛, հա՛, (Մորէ. Յէ.) Դեռ
 պիտի իջնես :

ՖԱ. Ո՛հ, ի՛նչ ձայներ . . . :

Ուրի՛ւ. Ո՛հ, թ՛ժ՛ղ զիս . զնա՛, զնա՛ :

ՅԱ. Գինի՛, զինի՛ ըսի . . . կին զու՛ն այս բա-
ժակին մէջ արիւն կայ . . . :

Ուրի՛ւ. Ո՛վ սարսափ, խենթեցաւ :

ՅԱ. Արի՛ւն . . . որո՛ւնն է . . . այդ ձեռքերդ . . .
անձ ձերաններ են որ կը սպառառեն զիս . հա՛, հա՛ հա՛
հա՛ . . . ս՛վ դժոխք, ի՛նչ երջանիկ եմ, և ի՛նչ-
պէս կայրիմ . . . (կիցնայ հոգեկոյրեն շրայ) Գիտե՛ս,
կի՛ն զու, ես ով եմ. ինձի վտահայաւ և ինս մատ-
նեցի . . . զիս սիրեց և ես սպաննեցի իր մայրը,
իբ եղբայրը . . . զինքը և թերեւս զաւակն ալ . . .
(կուլայ) Ա՛հ, զինի՛, զինի՛ բերէք, լեցուցէ՛ք, թա-
փեցէ՛ք, սղողեցէ՛ք զիս : Ա՛հ, ժպիտ մը ցուցուցէ՛ք
ինձի . ժպիտ մը կը գնեմ բոլոր գանձերովս, հոգիս
ալ ծախելով : (կը ի՛ջէրէ) :

Ուրի՛ւ. (Սարսափա՛ծ փախելէ կուգէ) Ալ յայտ մը չու-
նիմ ասկէ . . . հեռանամ . . . :

ԲԱՐ. (Սոյն փշուղեն ներս մտնելով) Վերջապէս
Վակնէրը քնացուցի ու փախայ եկայ . բայց աս ի՞նչ
է, հոս մարդ չկայ, Ոլիմպիա հոս է . . . զինքը համո-
զելու համար որչափ զօրաւոր փաստ ունի՛, ժողովցի
բերի . . . (Ուկուով լեցուն Կուսի մը կը ցցէ) Նայինք,
եթէ յաջողիմ և Ֆաուստին վրայ ունեցած սէրը ես
յափշտակեմ, ի՛նչ փառք, ի՛նչ սարծանք ինձի հա-
մար : Տիկի՛ն, (Գասկը ցուցնելով) Ձեզի աղաչանք մը
ունէի . . . :

Ուրի՛ւ. Հրամայեցէք, Տէ՛ր իմ :

ԲԱՐ. (Մէկուսի Կեմելը շոհելով) Ձիս իր տէրը կը
կոչէ . . . ապահով եմ որ հաւնեցու ինձի . . . աղ-
ւոր ըլլալս ալ ուրիշ բան է աշխարհիս վրայ :

Ուրի՛ւ. Ինձի բան մը պիտի ըսէիք, բայց առան-
ձին կը խօսի՛ք :

ԲԱՐ. Ձէ՛, Տիկի՛ն, անոր համար չէ . . . բայց . . .
վասն զի . . . ան ալ չէ . . . որովհետեւ . . . (Մէկ.)
Ատ աչքերուն զիմացը ի՞նչ կրնամ խօսիլ, ի՞նչ
կրնամ ըսիլ :

Ուրի՛ւ. Ուրեմն մնաք բարով :

ԲԱՐ. Կաղաչեմ, Տիկի՛ն :

Ուրի՛ւ. Ուրեմն խօսէ՛ :

ԲԱՐ. Ո՛վ նաղելի և փառաւոր գեղեցկութիւն,
արդեօք կը սիրէ՞ք զիս :

Ուրի՛ւ. (Գրեթէ իմ կէտէն) (Գրեթէ իմ կէտէն) :
ԲԱՐ. Աս ի՞նչ է . . . ետեւէն երթամ. փաստերով
համոզեմ . . . : Բայց թէ որ զիս ալ մատնէ, ըսիլ է
որ այս կնոջ սիրուն անզգայ է : (Երեւե՛ն նայելով)

Տիկի՛ն, ծիծաղ մը մրտան . անոր փոխարէն ձեզի հո-
գիս . . . չեմ տար, վասն զի զիտե՛մ որ հոգիս բանի
մը չէք կրնար գործածել . բայց . . . կառք մը . . .
ի՛նչ ալ աղէկ լեզուս բացուեցաւ, մնաք որ ինք հոս
է՛ լսելու համար . . . :

ՅԱ. (Ի Կուսի շրջէն) Ո՛ր առաջնորդեց զիս
անյաղ ցանկութիւնը . . . ձերութիւնը զիս գերեզ-
ման կը տանէր՝ բայց անարատ . . . կրկին մանկու-
թիւնը զիս ոճիրէ ոճիր գահալիժեց : Ո՛հ, ուրեմն ո՛չ
փառք, ո՛չ շուայտանք, ո՛չ մեծութիւնք չեն կրնար
երջանկութիւն տալ . չեն կրնար խիզճը խազազել,
չեն կրնար հոգիս յագեցնել . . . իմ ապագան մի՛թեւ
ցած է անաւոր ուրուականներով . . . :

ՊԱՏԿԵՐ Դ.

(Ֆառուստ կիսնայ դարձեալ թմբբեալ, երբ նոյն միջոցին ներքին վարագոյրը փոխուելով, Գոհար կերեւի հերարձակ, վայրենի ծաղկամբ պսակեալ. ցնցոտեօք ծածկեալ : Ֆառուստ քնոյն մէջ կը սարսուռի :)



ԳՈՀ. Այս վայրենի լեռանց վրայ քալելով ոտս քերս արիւնտանեցան. յոգնեցայ, բայց դարձեալ քալելու եմ. վասն զի տակաւին զինքը չգտայ : Ֆառուստը և թշուառութիւնք նիհարցուցին զիս : Ո՛հ, Աստուած իմ, արդեօք Ֆառուստ իր Գոհարը պիտի ճանչնամ : Գեղեցկանալու համար լեռներու ծաղիկներով գլխուս պսակ մը չինեցի . . . թէ որ զինքը չգտնեմ. այդ ծաղիկներէն առաջ իմ կեանքս պիտի թողմի :

ՄԵՑ. (Հեռուէն կանցի մընջելով :)

Եթէ լուսնի լուսոյն պէս (և այլն .)

ԳՈՀ. Ա՛հ. կը դուրս. որունն է այդ ձայնը . . . բոլոր վշտերս, բոլոր վախերս կը զարթնուն և կը պաշարեն զիս . . . : Տղայ մ՛ունէի հօրը նման գեղեցիկ և մօրը պէս սիրող . . . անոր հետ լճի մը եզերք նստեր էի. երբ դաւակա ջրերուն վրայ ծռելով կը խնդար, ջրերուն մէջէն հրեշտակ մ՛ալ անոր կը խնդար, և իրարու կը մօտենային . . . տղաս հրեշտակին զիրկն ինկաւ շամբերուն մէջէն . . . մէկտեղ երկի՞նք պայլն արդեօք . . . չգիտեմ . . . բայց դեռ հրեշտակը զաւակս ետ չբերաւ . . . և հօգիս տրտում է մինչեւ ցմահ ու դաւակիս ծիծաղներուն կը կարօտի :

ՖԱ. (Բնայ մէջ) Կենացդ վարդը թղթատեցի և հիմայ փուշերն զքեզ կը խայթեն . . . դժոխոց մէջ կայրիմ ես . . . Գոհար, ինչո՞ւ տրտում ես :

ԳՈՀ. Ելլեմ երթամ, թէպէտ հորիզոնը աչքիս դիմաց անհուն է և չգիտեմ ո՞ւր է ինք . . . : Ա՛հ, Աստուած իմ, եթէ հիմայ քնոյ մէջ ըլլար ու զիս երազէր . . . քալէ՛, թշուա՛ռ աղջիկ, որո՞ւ վրայ կը յուսաս . . . քալէ՛ ու լա՛ց. միակ միսթարութիւնդ արցունքներդ են :



ՊԱՏԿԵՐ Ե.

(Գոհար երթալէն վերջը ամպերն աւելի կը թանձրանան և կը նշմարուի Ետնա լեռը հրաբուրբ ք) :



ՖԱ. Ա՛հ . . . ո՞ւր եմ ես. ո՞ւր է նա . . . ի՞նչ ըրի. ի՞նչ տեսայ . . . ո՞վ խիղճ՞ թէ որ այսչափ դանակներ ունիս, ինչո՞ւ զիս չես սպաններ . . . ո՞վ ամօթ, ինչո՞ւ չես կործանիր վրաս ու զիս չես խըղդեր : Ա՛հ . . . մատնեցի անմեղը և դաւակա սպաննեցի . . . օգնութիւն, օգնութիւն . . . :

ՄԵՑ. (Գալով) Բարեկամ :

ՖԱ. Ձինքը՛ կուզեմ . . . զինքը՛ . . . հիմայ քեզի ըլլայ հողիս. բայց զինքը տուր ինձի :

ՄԵՑ. Ուզածդ դիւրին բան չէ՛ . . . բայց ես գիտես որ քնզի բան չեմ գլանար :

(Ահաօր սասանո-լիւնդ)

ՖԱ. Ի՞նչ է այս անաւոր դրդիւնը :

ՄԵՑ. Ետնան կը բորբոքի :

ՖԱ. Ա՛հ թող երթամ անոր հրաքերանին մէջ
գահալիժիմ, մեռնիմ, մոռնամ . . . :

ՄԵՖ. Գոհա՞րը :

ՖԱ. Ո՛վ դժոխք, զինքը նախ ազատելու եմ . . .
ո՛հ . . . Լիժէ կարենալի սրբազան տաճարութեամբ իրեն
եղած նախատինքը ջնջել . . . ու խրճիթի մը մէջ աղ-
քատ այլ երջանիկ անոր հետ ապրել . . . :

ՄԵՖ. (Կը +բ+ջէ) Սրբազա՛ն . . . :

ՖԱ. Ո՛վ դեւ . ի՞նչ կուզես ինձմէ, գոհ չեղա՞ր
ինձի տուած տանջանքներովդ, անմեղին վրայ թա-
փած աղէտիւքդ :

ՄԵՖ. Զիս չէ՞ք ուզեր, միաք բարով :

ՖԱ. Ա՛հ, Գոհա՞րը, Գոհարը ինձի սո՛ւր . . .
տեանեմ, կը պաղատիմ քեզի :

(Սասանա-խենտ, դըրքեւտ կը շարան, խո-
տարիկ տհաքէի կը փախին : Վայնասուն և հրդեհ :)

ՄԵՖ. Կորսնցնելու ժամանակ չունինք, Ետնան
խօսք չհասկնար, կամ թող զիս և հոս մեռիր Գոհա-
րէն հեռու կամ հետս եկո՛ւր . բայց չու՛ս որոշէ :

ՖԱ. Անիծեա՛լ, հետդ եմ, վասն զի այդ դժո-
խային թեւերուդ տակ հրեշտակ մը պահուլածս կայ :

ՄԵՖ. Փախչի՛նք ուրեմն . վասն զի քիչ ատե-
նէն իրքուլանուծի և բոժքէպի նման՝ այս շուտայտ
քաղաքն ալ հրաքորքոք լավաներու տակ անհետ պի-
տի ըլլայ : Փախչի՛նք, Աստուծոյ պատուհասն է և
զիս ալ կը զարնուրեցնէ : (Խոյն արան :)

(Ահաւոր ճայնմանտ և հրճե՛տ Երես լեբէն :)

ՊԱՏԿԵՐ 2.

(Գուշտ մը՝ խորը գրեական մը որ բանտի տեղ կը ծառայէ :)

ՏԵՍԻԼ Ա.

ՖԱՌԻՍ և ՄԵՖԻՍԹՈՅԵԼԷՍ

ՖԱ. Թշուառութեան մէջ . . . յուսահատութեան
մէջ . . . տարաբա՛ղք՝ երկրիս վրայ . . . ընդ եր-
կար թափառական և հիմայ բանտի մը խորը՝ յան-
ցաւորի պէս նետուած . . . զնտանի մը ստուերայ
մէջ՝ ուր ահաւոր տանջանքներ կը սպասեն այն ա-
նուշ և անբաղդ էակին . . . Մինչև հոն ինա՛լ . . .
Ա՛հ, ոգի՛ մասնութեան, ոգի՛ ոչնչի, դո՛ւ ծածկե-
ցիր զայն ինձմէ . . . Այո՛, հող կեցի՛ր, հող : Գար-
ձուր մողզնաբար դիւային աչքերդ, կեցի՛ր հող
և զայրացուր ցաւերս անտանելի ներկայութեամբդ :
Բանտի՛ մը խորը . . . անտանելի ցաւոց մէջ . . .
զիւայ մասնեալ և անխարսկիր մարդկութեան : Ե-
տոյն միջոցին դու կ'որորելիր զիս անլի դրօսանօք,
չէ՛իր յայտներ ինձ իր ահաւոր տաղնասպները . . . Ե
անօգնական կը կորսուէ՛ր Գոհար :

ՄԵՖ. Ո՛չ առաջինն է, և ո՛չ թերևս վերջինը :

ՖԱ. Շո՛ւն, պժգալի հրէշ . . . Ո՛վ ոգի Ամենա-
կալ, տուր ասոր իր նախկին կերպարանքը . . .
թող փոքրանայ, սողայ, ու տաքիս տակ կոխեմ զին-
քը : Առաջինը չէ՛ . . . ո՛վ սոսկումն անբացատրելի
մարդկային հողույ . . . անմեղ արարածներ այս վի-

ճակիս մէջ իյնա՞ն . . . ո՛հ . . . առաջին գոհը՝ մահուան տագնապններո՛ւն մէջ՝ իր դժնեայ ճգնաժամով յաւիտեանական գթութեան առջև չվճարե՞ց բոլոր միւսներուն համար : Մէկին միայն աղէտքը հողիս կը կեղեքէին և դու անտարբեր կը քրքրէս հազարաւորներու բաղդին վրայ :

ՄԵՑ. Ատ խօսքերը ամէն մարդու բերանն են , բայց ի՛նչ պարապ տեղ խեղք կը յոգնեցնես , անկէ անդին կարողութիւնդ չհասնիր , չես ըմբռներ , չե՛ս կրնար դարմանել , ինչա՛ . . . չե՛ս կրնար հասկնալ , փոյթ մ՛ընէ՛ր . . . չե՛ս կրնար յաղթել , խոնարհէ՛ :

ՖԱ. Մի՛ այդպէս կռճտեր շաղղակեր ատամունքըդ . . . զգուանք կը պատճառեն ինձ . . . ո՛վ վե՛հ Ոգի տիեզերաց որ լցուցիր զիս երբեմն՝ ինչո՞ւ շղթայեցիր զիս այս էակին հետ՝ որ միայն թշուառութիւնէ կ'ախորժի և աւերակօք կը շատանայ :

ՄԵՑ. Բաւական եղա՞ւ :

ՖԱ. Փրկէ՛ զինքը , ապա թէ ոչ վա՛յ քեզ . . . հազարաւոր դարերու անէծք պիտի տեղան ճակտիդ վրայ :

ՄԵՑ. Չեմ կրնար վրէժխնդիր արդարութեան կապանքը լուծել — ֓րկէ՛ զինքը . . . բայց ո՛վ է որ զայն անդունդը գահավիժեց , դո՞ւ թէ ես : (Ֆառասոյն Ե ԺԷԲԷ) Ա՛հ . . . կուզէիր կայծակն ունենալ ձեռացդ մէջ , հէ՛գ մահկանացու . . . աղէկ որ կարողութիւննիդ մինչև հոն չհասնիր :

ՖԱ. Իր եղած տեղը տա՛ր զիս . . . պէտք է աշատ ըլլայ :

ՄԵՑ. Քու ձեռքովդ թափեցիր արիւնը . . . և վրիժուց ուզեցիր կը հոլաթեւեն հրապարակին վրայ

և մարդասպանին վերագրածը կը սպասեն :

ՖԱ. Անէ՛ծք . . . տիեզերաց աւերակներն՝ իյնան վրայ ու կործանեն զքեզ , իրեն տա՛ր զիս . . . փրկէ՛ զինքը :

ՄԵՑ. Ահա բոլոր ընել կրցածս . բանտապահը կը թմբեցնեմ՝ գեհնաշունչ գոլորշեօք . . . դու բանալեաւ մտիր և ձեռքէն բռնած դուրս հանէ՛ . եթերային նժոյգները պատրաստ են զձեզ փախցնելու համար :

ՖԱ. Օ՛ն , օ՛ն , երթա՛նք :

ՊԱՏԿԵՐ Է.

(Տեսարանը փոխուելով անմիջապէս բանտ մը կը տեսնուի . բոլոր դուռ մը , ուսկից Ֆառասո կը մտնէ : Բանախն խորը շարժուն է և կը բացուէ ք) . . .

ՏԵՍԻԼ Ա.

ՖԱՌՈՒՍ և ԳՈՂԱՐԻԿ

ՖԱ. (Շար մը բռնալեօժ և լապտերով մը շոտք երկաթե դռն առջև) Անտովոր արհաւրօք լցուած է հողիս , ամէն մարդկային աղիտիւք վշտահարեալ . . . : Հոս կը բնակի նա , այդ խոնաւ պատերուն տակ և իր յանցանքը անուշ պատրանք մն էր . . . : Կը դողան իրեն երթալու . . . կը վախնա՞ս զինքը տեսնելու . . . յառա՛ջ , յառա՛ջ . . . քու վարանմունքդ իր մահուան ժամը կը փութացնեն : (Բռնալին կտրուէ : Ներսէն ք)

ՁԱՅՆ ՄԸ

Ուսանող մը հովանուոյն տակ

Իմ զաւակըս կը ննջէ .

Ո՛վ թշուառ մօր

Յոյս երկնաւոր ,

Օրոր . օրոր . . . :

Թռչնիկն երգեց թռփերուն մէջ ,

Բայց զաւակըս չարթնցաւ .

Ո՛վ թշուառ մօր

Յոյս երկնաւոր ,

Օրոր , օրոր . . . :

ՅԱ. (Գոհուլ Բաւալ) Մտքէն չանցնիր որ սիրահարը կը լրտեսէ , կը լսէ իր շղթայից գըղըխնը և յարդիկն շրջիւնը . . . (Կը հոնէ Է)

ԳՈՂ. (Խշարոյն Վրայ Չանալի Երեսը Ժառնիկ) Վա՛հ , վա՛հ , կուգան . . . ո՛վ ահաւոր մահ . . . :

ՅԱ. (Յաճ) Լուէ՛ , լուէ՛ . . . զքեզ փրկելու կուգամ :

ԳՈՂ. (Բաշխարոյնի Վիշն Երես) Եթէ մարդ ես , խնայէ՛ ցաւերուս :

ՅԱ. Ազդակներդ քնացող բանտապահները կըր նախ արթնցնել : (Շղթաները Կոչել Կարգ Է)

ԳՈՂ. (Ի Ժողով) Ո՛վ քեզի տուաւ . . . դահի՛ճ , իմ վրաս այդպիսի իշխանութիւն մը . . . կէս գիշեր է և դու զիս խեղդելու կուգաս . . . ողորմէ՛ , թո՛ղ որ ապրիմ . . . վաղը երբոր լոյսը ծագի . . . դարձեալ կանուխ չըլլա՞ր , (Յոռն Կայ) Ես դեռ մատաղ եմ , մատաղ . . . ա՛հ , հիմայ մեռնի՛լ . . . Գեղեցիկ ալ էի , ատ եղաւ իմ կորստեանս պատճառը . իմ մօտս էր

սիրականս , հիմայ հեռուն է . . . պսակս փրցուցին , ծաղիկները ցրուեցան : Այդչափ ուժգին մի՛ բռները զիս . . . ողորմէ : Ես ի՞նչ ըրի քեզի . . . ո՛հ , ի դուր չըլլան պաղատանքս , երբէք տեսած չեմ գրեզ :
ՅԱ. Ի՞նչպէս հանդուրժեմ այդչափ ցաւոց .

ԳՈՂ. Բոլորովին ձեռքդ եմ հիմայ : Թո՛ղ տուր գոնէ անգամ մը զաւակիս կաթ տամ : Բոլոր այս գիշեր սրտիս վրայ որորոյցի զինքը . . . Զիս տանջելու համար ձեռքէս յափշտակեցին և հիմայ վըսնն թէ սպաններ եմ . ինձի համար արտահետե ուրախութիւն չկայ : Վրաս երգեր կ'երգեն . . . չար մարդիկ . . . Վկայ մը կայ , որ այսպէս կը լիննայ . . . Բայց ո՞վ ըսաւ անոնց որ անոր ակնարկեն . . . :

ՅԱ. (Որոն Ենալի) Սիրականդ ոտքդ է ինկած , քու ցաւագին գերութեանդ դռները կը բանայ :

ԳՈՂ. (Ինքն ալ անոր արտն Ենալի) Այո՛ , այո՛ , ի ծունր եմ Սրբոց բարեխօսութիւնը խնդրելու համար : Տե՛ս այս կամարններուն տակ դժոխք կը բորբոքի . . . Գեւ մը ահարկու ճիշերով կը վաղվազէ :

ՅԱ. (Բարձրոյն) Գոհար , Գոհար :

ԳՈՂ. (Ուշարեց) Սիրելւոյս ձայնն է . (Կը ցորիէ , կէյնա շղթայ) Ո՛ւր է . զիս կոչե՛ց , ազատ ե՛մ . ալ զիս ո՛չ ոք պիտի բռնէ . . . փաթտուիմ իր վիզը , իր ծոցը հանգչիմ . . . Գոհար կանչեց . . . դրան սեմոց վրայ էր . . . դժոխային շառ սչման և ազմուկներուն մէջ , զիւս այդ քրքիջներուն մէջ իւր ձայնը լսեցի , ձայն սիրոյ և անուշից :

ՅԱ. Ես ինքն եմ :

ԳՈՂ. Գո՛ւ ես , գո՛ւ , ա՛հ , նորէն ըսէ՛ . (Կը քնարե) Ինքը՛ . . . ինքը՛ . . . Ո՛ւր են ցաւերս . ի՞նչ

եղան շղթայից և բանտերուն տանջանքները . դո՛ւ
ես , զիս փրկելու եկար , ես աղա՛տեցայ : Այո՛ , ահա
այն պարտէզն՝ ուր առաջին անգամ զքեզ տեսայ ,
այն գեղեցիկ պարտէզն՝ ուր Մարթա և ես անհամ-
բեր քեզի կրօնասէ՛խնք :

ՅԱ. (Տանիւ «պէտլ») Հետս եկո՛ւր , երթա՛նք :

ԳՈՀ. Ո՛հ . կեցի՛ր , այնչափ կախորժիմ քու ե-
ղած տեղդ կենալ : (Կը գո՛ւնէ :)

ՅԱ. Փութա՛ , փախչի՛նք , ապա թէ ոչ անաւոր
ապագայ մը կը սպասէ մեզի :

ԳՈՀ. Ի՛նչ , ալ չե՛ս կրնար գրկել զիս . ի՛նչ ,
այնչափ քիչ ժամանակ է որ հեռացար ինձմէ և մոռ-
ցա՞ր արդէն զիս գրկել : Ինչո՞ւ ծոցիդ մէջ կը տազ-
նապիմ , մինչդեռ ժամանակաւ քու խօսքերդ , քու
նայուածքդ արքայութիւն կը բանային սրտիս մէջ և
խզեղելու չափ կը գրկէի՛ր զիս : Գրկէ՛ զիս , ապա թէ
ո՛չ ես գքեզ կը գրկեմ : (Վեղը նը փո՛ւնէ :) Ա՛հ , Աս-
տուա՛ծ , պաղ են շրթունքդ՝ անխօս են : Ո՞ւր մնաց
սէրդ . . . ո՞վ յափշտակեց զայն ինձմէ : (Նըբ՛ւն նը
դա՛րձնէ :)

ՅԱ. Ո՛հ , եկու՛ր , անուշ բարեկամ , սիրտ ա՛ն . . .
անհուն եռանդեամբ կը սիրեմ զքեզ . . . միայն թէ
հետս գա՛ս . . . միայն աս է խնդրածս . . . :

ԳՈՀ. (Աչե՛րը վրա՛ն յառա՞ծ) Դո՞ւ ես արդարեւ ,
ստո՞յգ է :

ՅԱ. Ո՛հ , այո՛ . բայց եկուր :

ԳՈՀ. Շղթաներս կը փշրես , զիս նորէն գրկացդ
մէջ կառնես . ինչպէ՞ս չես սոսկար ինձմէ , գիտնո՞ս ,
բարեկա՛մս , թէ զո՞վ կազատես :

ՅԱ. Ո՛հ , եկու՛ր , եկու՛ր , արդէն , զիչե՛րոյ
ստուերք կը փախչին :

ԳՈՀ. Մայրս սպաննեցի , խեղդեցի տղաս : Ո՛չ
ապաքէն քուկդ էր տղան , ինչպէս իմս . այո՛ , քու-
կդ : — Դո՞ւ ես՝ դժուարաւ կը հաւատամ , ձեռքդ
սո՛ւր , երազ մը չէ , աս սիրելի ձեռքը . . . ա՛հ . . .
բայց թրջուած է . . . սրբէ՛ . . . բայց կարծեմ արիւն
կայ հող . . . Աստուա՛ծ , Աստուա՛ծ , ի՛նչ բըրբ ,
այդ սուրբ պատեանը մղէ՛ , կաղաչեմ :

ՅԱ. Եղածն եղած է , ալ ասոր մը՛ մտածեր՝
ուրեմն կուզե՛ս որ մեռնիմ :

ԳՈՀ. Ո՛չ . պէտք է որ ապրիս դու , կատիկ հա-
տիկ անուանեմ քեզ այն գերեզմանները՝ որոց խնամ
տանհլու ես վաղուրնէ սկսեալ : — Ընտրելագոյնը մօրս
սո՛ւր , եղբօրս՝ ձիշդ անոր քով . ինձի՛ քիչ մ'անգիմ՝
բայց շատ հեռու չըլլայ և իմ տղաս ալ ծոցիս վրայ
հանգչեցո՛ւ . ուրիշ մը չկայ որ քոփս հանգչիլ ուղէ՛ :
Քոփդ կենալը , քաղցը ու զմայելի երջանկութիւն
մ'էր . բայց ա՛լ պիտի չվայելեմ զայն . կարծես թէ
ինքզինքս բունադատելու եմ քեզի մօտենալու համար
և թէ դու զիս ետ կը մղես . և սակայն դո՞ւ ես , և
այնչափ գորովանօք աւ անուշութեամբ կը նայիս ինձ :

ՅԱ. Եթէ կզդաս որ ես եմ , եկու՛ր ուրեմն :

ԳՈՀ. Ո՞ր կողմէն :

ՅԱ. Ազատութեան :

ԳՈՀ. Դուրսը գերեզմանն է : Մահը կը լքեսսէ .
եկու՛ր , աղէ՛ , ասկէ յաւիտենական հանգստեան տն-
կողինը և ո՛չ անդին : Դու հիմայ կերթաս՝ Եղուարդ ,
ո՛հ , կարենայի հետդ դալ :

ՅԱ. Կրնա՛ս , միայն կամք բրէ՛ , բայց են դրունք :

ԳՈՀ. Չեմ համարձակիր ելլել , ինձի համար այ-
սուհետեւ յոյս մը չկայ , ի՛նչ օգուտ փախչելէ . . .

մեր ետեւէն ինկած են : Որչա՞փ ցաւալի է մուրալու սախալուիլ , մանաւանդ խղճի խայթերով . օրչա՞փ թշուառ է օտարութեան մէջ թափառիլ : Բայց անով ալ իրենց ձեռքէն չեմ աղատիր :

ՅԱ. Ես քովդ կը մնա՛մ :

ԳՈՂ. Եո՛ւտ , շո՛ւտ տղադ ազա՛տէ : Գնա՛ առաւակին երկայնքը՝ անտառին մէջ պզտի կամբղէն անդին՝ ձախակողմը՝ տախտակին մօտ, լճի՛ն մէջ . . . շուտ գնա՛ . . . ջրէն դուրս ելնել կը ձգնի , կը տապալելուի . . . փրկէ՛ , փրկէ՛ . . . :

ՅԱ. Զգաստացի՛ր , քայլ մը միայն և կազատիս :

ԳՈՂ. Գոնէ լեռնէն անդին ըլլայինք . . . հոն մայրս քարի մը վրայ նստած է , ցրտութիւնը թիկունքս ի վար կիջնէ . . . հոն մայրս քարի մը վրայ նստած է , և գլուխը կերերցնէ . ալ չչարժիր . . . աչքերը չեն բացեփիր , գլուխը ծանրացեր է . . . որչա՞փ ժամանակ անցաւ . . . ալ չհսկէր . . . Յարմար ատեն կը քնանար մեր զրօսանաց համար : Երջանի՛կ ժամանակ :

ՅԱ. Արովհեաիւ ո՛չ խօսքերս , ո՛չ աղաչանքս չեն ազդեր , հոսկէ բռնի՛ տանելու եմ զքեզ :

ԳՈՂ. Ո՛հ , թո՛ղ զիս . . . մի՛ բռնադատեր . . . այդչափ բրտութեամբ մի՛բռնէր թեւէս : Ատեհով սիրոյ համար ամէն բան չըրի՛ք քեզի :

ՅԱ. Առաւօտեան զովութիւնը կը շնչէ , ա՛ն իմ հողի՛ս , իմ նազելի՛ս :

ԳՈՂ. Լո՛յսը . . . ո՛հ , այո՛ , լոյսը , վերջին լոյսը հոս կը թափանցէ . . . այս պիտի ըլլար իմ հարսանացս օրը : Մարդու մ՛ըսեր որ Գոհարին քովն էիր : Վա՛ն : զիս . . . իմ սրակս թոռմեցաւ . . . պիտի տեսնուինք զարձակ , բայց ո՛չ թէ զրօսանաց հա-

մար . . . խառնամբօս բազմութիւնը կը դիզուի . . . հրապարակն ու փողոցները լեցուն են : Լա՛է՛ զանդակին ձայնը . . . ինչպէ՛ս կը կապեն ու կարկեն զիս և կը քաշկռտեն դէպ ի գլխատման բեմը . . . և զիս վրայ հեռուէն կը փայլի սրուած դանակը . . . աշխարհս լուռ է գերեզմանի մը պէս . . . :

ՅԱ. Ա՛հ , ինչո՞ւ ծնայ :

ՄԵՑ. (Երեւալով է դռան) Հա՛պ օն , ապա թէ ո՛չ կորսուեցանք . . . սնտոի յուսահատութիւն , վարանմունք և շողփաղէփանք . . . ձիերը կը փռնչեն և երկնից եզերքը կը ձերմզնան :

ԳՈՂ. Ո՛վ է որ երկրէն կը բարձրանայ . . . ինքը՛ ինքը՛ . . . վանէ դայն , ի՛նչ կուզէ այս սրբավայրիս մէջ . . . զիս կը խնդրէ :

ՅԱ. Դո՛ւ ապրելու ես :

ԳՈՂ. (Գեղմատաբ է ծռնը) Աստուածային արդարութի՛ւն , ինքզինքս քեզի կը յանձնեմ :

ՄԵՑ. (Առ ծռռոտ) Եկո՛ւր , եկո՛ւր , ապա թէ ո՛չ հող կը թողում զքեզ իրեն հետ :

ՅԱ. Իրեն հետ մեռնի՛լ . . . ո՛հ , միա՛կ ձառանգայթ երկնից իմ խաւարեալ մտացս մէջ :

ԳՈՂ. Քուկդ եմ ես , Հայր , փրկէ զիս : Գուք հրեշտակը , երկնաւոր զօրութիւնք , զուհագուհուդ հովանացէ՛ք գլխուս վրայ . . . Եղբաւրդ՝ կը սոսկամ քեզմէ , ո՛հ , (կը ժպտի թաղցր զճալանօք) :

ՅԱ. Ո՛հ , վերջապէս սթափեցաւ . . . հիմայ ու՛զ գատ է :

ԳՈՂ. Այո՛ , ազատ եմ , կը մեռնիմ :



ՊԱՏԿԵՐ Ը.

(Յսուևս 'ի ծուներ իջած արհաւրօք երեսը ձեւաց մէջ
կանգնելէ : Գոհար որ ամպի մը մէջ ծածկուած
էր , ամպը փառաբանելով . երկնաւոր լուսերով
արեւուցած կերեւոյ :)



ՄԵՑ. Դատուեցաւ :

ՁԱՅՆ ԵՐԿՆԻՑ. Փրկուեցա՛ւ :

ՄԵՑ. (Ա. Ֆառաւոր) Երթա՛նք :

ՁԱՅՆ ԵՐԿՆԻՑ. Ֆառ՛ւստ , Ֆառ՛ւստ :

Ընկերութեանս կնիքը չկող օրինակները
անվաւեր են :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԴՊՐՈՑԱԾՍԷՐ ՀՍՅՈՒՀԵՍՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՌ ՀՍՅ ԼԵԶՈՒ Ս. ՏԵՍՏՐ ԴՐԸ 5
ՖԱՌԻՍՏ " 5



ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ Թ. ԹԷՐԶԵԱՆԻ

ՍԱՆԴՈՒԹՅ (Բ. ՏԻԿ.)
ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՍԻԿ
ԱՐՇԱԿ Բ.
ԱՆԱԿՐԷՈՆԻ ՏԱՂԻ (Թարգմանեալ է Հելլէն բնադրէն.)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԵԱՆ

ԱՆԻ ՈՃՈՎ ԳՐԹ. քերակ. Դաղ. լեզուի Բ. ՏԻԿ.
ՕՒԼԷՆՅՈՐՑԻ " " " "
ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ մասն Բ. (5 Էն 7 տարեկան աղջիկոց
մտաւոր զարգացումն.)
ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ մասն Բ. (6 Էն 8 տարեկան աղջիկոց մտա-
ծել հրահանգելու համար :)

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ,

ԱՆԻ մասն Բ.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0429987

31083